



1. 2.

fukusuke honyuji



"ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՐՆԱԼ ԹՎ. 1.

Ե. Պ.



ՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԵԱՅՔ




Թիֆլիս

Տպարան Մովսես Վարդանեանի


Դրա մ. Վարդանյանց, Ղազակ փողոց թիվ 3

1894



1999

Ե. Պ.



ՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԵԱՑՔ

Վ 2 3 2 4

«Արսէն Դիմաքսեան»—վէպ. հեղ. Շիրվանզադէի
Հ 5481 պահություն օւ-ը 1. տունը 1. տունը առ առ




ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսէս Վարդանեանի

Տիպ. Մ. Վարդանցա, Գանովսկայ պողոտա Ն 3

1894



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Դօս. պեղությունը 15-րդ Հոկտեմբերի 1893 թ.

Առաջին

Հայաստանի Հանրապետության մասնակիցներին

Հ 22 39-ԱՅ Հ ա լ ա թ

2247
2247

Հայաստանի Հանրապետության մասնակիցների համար պարբերական մամուլի մէջ ամենից շատ տեղ բռնեց ալ. Շիրվանզագէի նոր վէպը՝ „Արևէն Դիմաքսեան“ խորագրով: Ընթերցող հասարակութեան կողմից լաւ ընդունելութիւն չը գտաւ այդ վէպը, թէ մի քանի առանձին պատճառներով հասակցութեան, նոյնիսկ վիճարանութեանց տեղիք տուեց, և յէ իսկ առանձին պատճառներից շնորհիւ գրուածքն արժանի է լուրջ ուշագրութեան: Խս էլ կարդումէի այդ վէպը և այժմ ցանկանում եմ ընթերցողի հետ մի փոքր զրոյց անել իս ստացած տպաւորութիւնների մասին, և մանաւանդ այն մասին թէ՝ ինչ կարգի մոքեր առաջացրեց իմ մէջ վէպի ընթերցումը: Նախնապէս հաւասարիցնում եմ իմ ընթերցողին, որ ես բոլորովին մտադրութիւն չունիմ թափանցել հեղինակի դիտաւորութեանց, նպաստակների և միտումների մէջ.—Ես չեմ ուզում ենթադրութիւններ անել թէ ինչ է ուզեցել ասել հեղինակը իր այդ վէպով, ինչ նպաստակի է ուզում համեմ, կամ ինչ ձգտումներ է ունեցել... Մարդուա հոգին ծով է սառամ է ժողովրդական առածք, և ով կարող է հաստատ երաշխատոր լինել, թէ՝ այսինչ, կամ այսինչ զրուածքը, հեղինակը այսինչ կամ այնինչ նպաստակով է գրել:—Խնայելով ընթերցողների թէ ուշագրութիւնը

և թէ ժամանակը, ես կ'աշխատեմ վէպի մասին խօսել, կ'աշխատեմ նրա մէջ դուրս բերուած փաստերը դասաւորել որոշ կարգով, որոշ սիստեմայով, կ'աշխատեմ պարզել այդ փաստերի ներքին կենացական միտքն ու ողին, — և ընթերցողը այդ բոլորը կարդալով, անշուշտ կը գայ մի որոշ, պարզ, հասկանալի և ըմբռնելի եղբակացութեան։ Եյս է իներս իմ աշխատանքը։

Պ. Շիրվանզադէն փաղուց արդէն ծանօթ է մեր հասարակութեանը. նա գրել է մի շաբթ վէպիներ և վէպեր, որոնք գանգան ժամանակներում հրատարակուելով, զանազան հետաքրքրութիւն են զարթեցրել մեր հասարակութեան մէջ և դրա համաձայն էլ ունեցել են ընթերցողներ։ Բաֆֆիի կենդանութեան ժամանակ՝ ալ. Շիրվանզադէի գրականական գործունէութիւնը առանց ուշադրութեան չէր մնում հասարակութեան կողմից։ Նրա գրած վէպերը, Բաֆֆի վէպերի հետ միասին տարածվում էին հասարակութեան մէջ, և եթէ չէին զարթեցնում այն ընդհանուր, բուռն ոգեսրութիւնը, ընդհանուր համայնքը, ինչ որ յատուկ էր Բաֆֆիի գրուածքներին, դռնէ չէին էլ մնում հասարակութեան կողմից առանց ուշադրութեան։ հասարակութիւնը կա նոնաւ ու ու ա պէս կարդում էր ալ. Շիրվանզադէի աշխատութիւնները։ Նո յիշում եմ թէ՝ որպիսի խրախոսով և անկերծութեամբ ողջունեց Գ. Արծրունին հեղինակի „Գործակատարի յիշանակարանից“ գրուածքը։ Գրանից յետոյ նա գրեց էին մի քանի, նոյն իսկ ընդարձակ վէպեր (օր. „Նամուս“, „Արամերին“ „Զուր յոյսեր“ և այլն), որոնք որոշ շափով արժանացան թէ հասարակութեան և թէ գրականական լիշտաների հաւանութեանը, թէ բարոյական և թէ նիւթական խրախոսին։ Այսպիսով չը նայերով այն հանգամանքին, որ ւրջը կրիստիկայով երբէք չէ վերաբերուել մեր մամուլը դէպի ալ. Շիրվանզադէն, նրա գրականական պատկերը բաւական որոշուել է արդէն, և նա

ստացել է մեր վիպասանների շարքում, եթէ նչ վայլուն, նչ այնքան բարձր, բայց դարձեալ որոշ, հաստատուն և մշտական մի դիրք։ Այդ կողմից պ. Շիրվանզադէն տեղիք չունի գանգատուելու հասարակութեան անտարբերութեան վերայ. հասարակութիւնը, առանց կրիստիկայի օգնութեան, առանց մամուլի առանձին ազդեցութեան, — նոյնիակ կարդարով վէպերը, պատկերները, — կարողացել է գնահատել հեղինակին, համարեա ըստ արժանոյն։ Լուրջ և սիստեմատիկական կրիստիկայի բացակայութիւնը ընդհանուր երեսով է մեր մէջ, և մեր նոյն իսկ ամենաերևելի մատենագիրներն անգամ գեռ կարօտ են այդ տեսակ կրիստիկայի։ Մեզանում ամեն ոք ինքն իր տեղն է պատասխանառու, ամեն փաստ, կամ երեսով ինքն իր տեղն է խօսում։ Գոնէ այդպէս է գրականական ասպարիզի վրայ։

II

Պ. Շիրվանզադէի վէպերը ոգեսրութիւն երբէք չեն առաջացրել հասարակութեան մէջ։ Ընթերցողը, և հարկէ, չի ափստում, որ առնում և կարդում է պարոնի գրքերը, չի փոշմանում և դեռ բաւական էլ է մնում իւր առածից ու կարդացածից . . . Բայց այդ ընթերցողը, գրքի ընթերցանութեան ժամանակ՝ ամեն մի տողում զգում է, որ ինքը գիրք է կարդում, որ իր կարդացածը հնարովի, շարադրած բաներ են։ Կեանքը իր անողոք խառութեամբ, իր փոթորկայից ընդհարումներով ու կրքերով երբէք չի կանում ընթերցողի ուշն ու միաբը՝ ալ. Շիրվանզադէի վէպերը կարդալիս։ Ընթերցողը միայն զգում է, որ ինքը լսում է, կարդում է մի դէպի, մի անցք, մի պատմութիւն, որ վերցրած է այս կամ այն հասարակութեան կեանքից, զգում է, որ հեղինակը աշխատել է նման աց նայն ել իր

այդ պատմածը խսկական կեանքի երևոյթներին։ Եւ, պէտք է խոսոտվանած՝ շատ տեղեր այդ աջողութ է հեղինակին, մանաւանդ երբ հարկաւոր է նկարագրել կեանքի արտաքին մակերևոյթը, — հասարակութեան սովորութիւնների, նիստ ։ կացի պատկերը։ Պ. Եփրվանգարէն երբեմն աշխատում է և նոգերանական երևոյթներ նկարագրել, աշխատում է հոգեկան ընդհարում, կրիւ, դրամա առաջ բերել իր վէպերի մէջ. բայց նրա այդ ցանկութիւնը մը նում է լոկ ցանկութիւն, և դրամայի փոխարէն, կամ ստացւում է սովորական մի պատմութիւն, կամ թէ չէ, — աւելի վատ, — ստացւում է մերօքրամատիքական կարիկատորա, որի մէջ ամեն բան կայ խառնուած, ամեն բան կայ ասուած, բայցի կեանքի ճշմարտութիւնից, բայցի անկեղծ, անպաճոյն պատից դուրս բժիշած զգացմունքից։ Վ. երջն տեսակի գրուածքներից է „Արսէն Դիմաքսեան“ վէպը։ Հմուտ կարիկատորիքստները երբեմն շատ զուարձալի բաներ են անուած, վերցնում են, օրինակի համար, մի նշանաւոր հասարակական գործիչի, մի երեւելի գրողի, բանաստեղծի և այն պատկեր։ Վ. երջնում են այդ մարդուն իր գործունէութեան ամենաարտայայտիչ մօմենտում, շըրջապատուած ամեն տեսակ անհրաժեշտ ակսեսուարներով և . . . այդ պատկերը այնպէս են այլանդակում զանազան աւելորդ, անբնական, նոյնիսկ՝ խայտառակ մանրամասնութիւններով որ նայողը չի կարող զսպել իր ակամայ ծիծալը։ Այդ տեսակ պատկերը կոչւում է ծաղրանկար կարիկատորա։ Գուք նայում էր այդ տեսակ պատկերին, ճանաշում էր խսկական, ընդհանուր գծերը, որոնք դուցէ շատ թանգ են ձեզ համար, բայց, միենոյն ժամանակ՝ ծիծալում էր ակամայ, ինքնաբերաբար. ծիծալում էր, որովհետ հմուտ արուեստագէտը բարեհամել է այդ նշանաւոր մարդուն ծիծալով դրութեան մէջ պատկերացնել. և դուք ակամայ, ըստէապէս ինթարկւում էր ճարպիկ նկարչի խո-

բամանկութեանը, ծիծալում էր, որ մի քանի ըստէ յետոյ աւելի խոր ատելութիւն և զայրոյթ զգաք դէպի ձեզ մուլրեցնող զուարձանէր և խորամանկ նկարիչը։ Անշուշտ դուք այլա չէք ցանկայ նայել այդ ծաղրանկարին, որովհետ այդ վիրաւորում է ձեր ամենաազնիւ զգացմունքները, որ դուք տածում էր դէպի նշանաւոր անհատը, — դուք ձեզ անպատուած, վիրաւորուած էր համարում . . . Ֆիշեալ բնաւորութեան ծաղրանկարներ տեսած կը լինի ընթերցողը՝ երգիծաբանական հրատարակութեանց մէջ։ Եւ ես չեմ կասկածում, որ ընթերցողի*) վրայ ճիշտ այդ վիսի տպաւորութիւն է արել պկ. Շիրվանդադէի „Արսէն Դիմաքսեան“ վէպը։ Դիմինք վաստերին, — լիսպի մանրամասն ուսումնասիրութեանը։

III

Յօդուածիս առաջին վիխում ես ասացի որ դիտաւութիւն չունիմ մտնելու հեղինակի միտումների, նպատակների մէջ, ես չեմ ուզում ենթագրութիւններ անել, ամբովք „Արսէն Դիմաքսեան“ վէպը գիտակցօրէն, նախամասածուած կերպով է ստացել իր այդ կարիկատորային բնաւորութիւնը թէ՝ այդ բանը դուրս է եկել հեղինակի ցանկութիւնից բոլորովին անկախ, առաջ է եկել — ակամայ, ստեղծագործական ոյժի պակասութիւնից հեղինակի մէջ։ Այդ հարցը դուցէ յետոյ, ինքն ըստ ինքեան վճռուի, Միայն ընթերցողը թող ուշագրութեամբ հետեւի „Արսէն

*.) Ընթերցող ասելով ես չեմ հասկանում մական մարդ, որ գիտէ կարգացել և կարգացել է վերոյնշեալ գործածքը, ընթերցող ասելով ես հասկանում եմ այն տեսակ ընթերցունեցն, որոնք ունեն քէշ-շատ զարգացած գրականական գրա-

Դիմաքսեան” վեպի աստիճանաբար վերլուծութեանը, որ ես մատղիք եմ անելու նրա առաջ: Բանն ահա թէ ինչ չումն է: Երիտասարդ Դիմաքսեանը նոր է վերադարձել արտասահմանից Թիֆլու և ուզում է այսաեղ գործել: Նա ընդամենը քսան ու վեց տարեկան է: Արտասահմանում նա ուսումնասիրել է հասարակական գիտութիւններ և իրան պատրաստել է յատկապէս հասարակական գործունէութեան համար: Ահա թէ ինչ մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում հեղինակը իւր հերոսի մասին: Դեռ գիմնազիօնի նստարանից նա աշխատակցում էր մի լրագրիք Ընկերներից շատերը գուշակում էին, թէ ժամանակով նա լաւ քննադատ կամ քարոզիչ կարող է վներ Գնալով արտասահման, նա շարունակեց աշխատակցել նոյն լրագրում, հետզետէ ընդարձակելով գրութեան շրջանը և գաղափարը: Վերջին ժամանակ նա քաղաքական յօդուածներ էր գրում առաջ Լեյպցիգից, յետոյ Ֆիւրիխից: Դիմաքսեանը գաւառացի մի յայնոնի կալուածապիտոջ որդի էր: Նրա հայրը, որպէս հին մարդ, պահանջել էր որդուց գիմնազիական ուսումնով բաւականանալ և շարունակել այլ ևան Արսէնը ընդդիմացել է հօր կամքին և նրա ցանկութեան հակառակ գնացել է արտասահման, ընդունելով հօրից ստացած փողը միայն որպէս պարտք: Հօր և որդու մէջ այսպէս շատ չուտ խուռում է ամեն տեսակ բարոյական կապ և Դիմաքսեանը այժմ, համալսարանական ուսումը վերջացնելուց յետոյ զգում է, որ պէտք է վճարէ և հօր պարտքուն ընկերներից ոմանք յանդիմանում են նրան հօր դէմ բունած այդ անտակու դիրքի համար, բայց Դիմաքսեանը ամենքին տալիս էր միւնոյն դրական պատասխանը: — “Եթէ մենք ուզում ենք անկախ վներ, առաջին պատերազմը մեր ծնողների դէմ պիտի սկսենք”: Նրա դէմքի մասին հեղինակը ահա թէ ինչ է ասում: “Նրա դէմքի գծերը խոշոր էին, ազդու և անմիջապէս ուշադրութիւն դրաւող:

Սև ու խիտ յօնքերի տակից փայլող խոշոր աչքերը վերին աստիճանի արտայայտիչ էին, խելացի և թափանցող: Նրա բնաւորութեան յատկանիշ գծերից մէկն է այն է, որ նա աւելի շուտով կը համաձայնի քաղցած մնալ, քան թէ պարագ վերցնել որ և է մէկից՝ թէկուղ իր ամենամօտ ընկերից: Ահա այս է պատճառը, որ Թիֆլու գալուն պէս նա շուտով դիմում է Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեանը և պաշտօն խնդրում: Այդ պաշտօնը նա շուտով ստանում է և նիւթական կողմից ապահովվում առժամանակ: Ներսիսեան դպրանոցի հոգաբարձուներից մէկը դեռ պաշտօն տալու ժամանակ՝ մի այսպիսի հաճոյախօսութիւն է անում Դիմաքսեանին: “Մեղ համար շատ ուրախալի է ձեզ պէս կրթուած ուսուցիչ ունենալ մեր դպրոցում, ձեր անունը ձեղանից առաջ է մեղ հասել”:

Իրեւ հասարակական գործիչ Դիմաքսեանը չ'ունի որոշ ծրագիր, գործունէութեան որոշ և մշակուած պրօդրամա: Միայն մեղ երեսում է, որ նա խիստ արմատական մտքերի, համոզմունքների տէր մարդ է, որ նա սաստիկ պաշտպան է անհատի աղատ զարգացման գաղափարի, վերին աստիճան հակուած դէպի թոյերի, ձնչուածների, խեղճերի պաշտպանութիւնը: Անպայման ազնւութիւն, անպայման ձշարտասկրութիւն և — արդարութիւնը, ձմարտութիւնը պաշտպանելու համար — ընդունակ ամեն տեսակ զոհարերութեան, ոչ մի անդամ, ոչ մի մազի չափ զիջում չ'անող կեանքի արգելքների առաջ: համարձակ, յանդուզն իր կարծիքները, իր մոքերը պաշտպանելու ժամանակ՝ ահա թէ ինչ տեսակ տարրերից է բաղկացած Դիմաքսեանի բնաւորութիւնը, նրա ընդհանուր ողին: Ապագայ գործունէութեան վրայ մտածելիս, ահա թէ ինչ տեսակ մտքեր են անցնում նրա վիստը: “Ահա այն կեանքը, որին նա վաղուց փափագում էր, այն երկրը, այն շրջանը, դէպի ուր ձգտում էր ուսանողական շրջանից: Վերջապէս նա

գտնուում է այն հողի վրայ, ուր պէտք է ցանէ տարիների ընթացքում ժողոված սերմերը։ Օ՛, որքան յետ է մնացել նրա մայրենի ժողովուրդը այն առգերից, որոնց հետ շրջուել է նա վեց տարի շարունակ։ և որոնց բաղաքակրթութեան արգասիքները տեսել է աչքով։ Որքան տարբերութիւն այն տեղի և այս տեղի, այն կեանքի և այս կեանքի մէջ . . . Այն բազմաթիւ գաղափարները, որ բարդուել էին նրա գլխում, դործադրութեան ելք էին ուսուում։ Մի ներքին հոգեկան ոյժ վասուում էր նրա սիրութ անզուսակ եռանդուի։ Միւս կողմից նախանձը գրգռվում էր նրա սրտում, երբ յիշում էր այն անմահ մարդկանց, որ պատանեկան հաստակում արդէն անուն էին վաստակել։ Ահա հէնց այդ անմահների ստուերներն էին, որ մզում էին նրան գէպի առաջ, որ գիշեր-ցերեկ հալածում էին նրա միարը և խստանում նախանձելի ասպարայ։ Այն, նախանձելի, որպիսէուն նա չի մնալ անյայտութեան մէջ, նա իւր կեանքը չի թողնի խաւարում։ Նա բաց կանի իւր ոյժերով մի նոր ասպարէզ, ուր նրա անունը կը փայլի ինչպէս մի մհնաւոր պայծառ ասող։ Մարդիկ կը ճանաչէն նրան, կը լսին նրա լրատամախօս ձայնը։ Նա կառաջ-նորդէ իւր հայրենակիցներին գէպի լրյու, արդարութիւն, ճշմարտութիւն։ Ամրախը, ողորմիլի, եղիկելի ասիական ամբոխը կը գգայ նրա ոյժը, կը սկսի հետեւ նրան, փառա-բանել, երկրագութիւն տալ նրա հանձարին, ծափահարել նրա ամեն մի քայլ։” (Եր. 24) Այս բոլորը ամփոփելով ընթերցողը, ևս կարծեմ շատ հեշտութեամբ կը մտարերի Գրիգոր Արծրունու “Ելելնայի” հերոսին, որը նոյնպէս ուսանող էր, նոյնպէս պատրաստում էր հասարակական—գրական գործունէութեան համար և, Դիմաքսեանի նման՝ մեծ մեծ խնդիրների վրայ էր երազում։ Բայց Գրիգոր Արծրունին

իր հերոսին կիսատ հանապարհի վրայ է թողնում։ Նա միայն ծանօթացնում է մեզ երիտասարդ ուսանողի հետ, պատմելով նրա գլխին եկած մի փորձութիւն և այդպի-սով էլ վերջացնում է իւր պատմութիւնը։ Իսկ պ. Շիր-փանդարէն, կամենում է աւելի առաջ գնալ, նա փորձ է անում ցոյց տալ իր հերոսին գործունէութեան մէջ։ Զը նայելով այդ հանդամանքին, —չը նայելով որ Արծրունու հերոսը մեր առաջ չի դուրս գալիս իր բուն գերի մէջ, այլ միայն սիրահարվում և խարբում է, դասնալով կնոջ խորամանկութեան զոհ, —հեռու իր հայրենիքից, հեռու ծոտարութեան մէջ, օտար կեանքով, օտար մարդկանցով Ջանպատուած ու գրաւուած՝ այս բոլորը անյարմար և աննպաստ հանդամանքներում դարձեալ նրան աջողիում է գրաւել իր կողմը ընթերցողի ուշքն ու միարը, գրաւել նրա ոչ միայն խորը համակրութիւնը, այլ և սէրը . . . Ի՞նչ է սրա պատճառը. Ի՞նչ է պատճառը, որ „Եվէլինա“ փոքրիկ վէպի հերոս երիտասարդ հայ ուսանող՝ գեռ ևս չկազմակերպուած, անփորձ մի պատանի, որ իր անմե-դութեան, անփորձութեան շնորհի սասակիկ գրաւում է մի օտարուակի օրիորդով, քիչ է մնում խելագարուի այդ միքուց, որ երկար ժամանակ տանջվում է իր անյաջող միքու համար և ուրիշ էլ համարեա ոչնչ չէ անում, բացի միքելուց և տանջուելուց, այդ երիտասարդը, դարձեալ ուկորում է Գամառ-Քաթիւպայի, Սմբատ Շահպետեանի նման մարդոց, իսկ պ. Շիրվանզադէ հերոսը, որ իսկա-պէս նոյն ընաւորութեան, նոյն տիպի, նոյն գաղափար-ների, իգէաների տէր մարդ է, և, որ գլխաւորն է՝ գոր-ծում է յօդուածներ է գրում լրագիբներում, դասեր է տալիս, զասախօսութիւններ, ըշիքերատներ է կարդում, ընկերների հետ հասարակական խնդիրներ է վճռում, ծը-րագիբներ է կազմում և այլն և այլն, —այդ մարդը չի կարողանում մազի չափ գրաւել ընթերցողի համակրու-

թիւնը, և բացի դրանից՝ գեռ, ծաղրի ու ծիծաղի առարկայ էլ է դառնում . . . Ի՞նչ է պատմառը: —Պատմառը անողորմ ճակատագիրն է, որ մէկին գցել է Արծրունու գրչի տակ, իսկ միւսին պի. Շիրվանզադէի նման գրովի: Եթէ Արծրունու հերոսը գրաւում, ոգևորում է ընթերցողին՝ պատմառն այն է, որ Արծրունին ինքն էլ գրաւուած, ոգևորուած էր իր հերոսով, պատմառն այն է, որ „Եվլինա“ վէպի հեղինակը „մարմին ի մարմնոյ“ էր իր տաեղծագործած երիտասարդի հետ—սրա զգացմունքները, սրա իղձերը, սրա ցանկութիւնները և ձգտումները բղիսում էին հեղինակի պատից ու հոգուց, կազմում էին հեղինակի ամրող բարյոյական էռթիւնը. Արծրունին ինքը, իր պատանեկական հաստակից ակսեալ, մինչ իր կեանքի վերջը, ապրում, շնչում և ոգեսրում էր այն զգացմունքներով, մտքերով, իդէալներով, ինչ որ այնքան գեղեցիկ կերպով արտայացու է նա իր վէպի հերոսի մէջ:

Քողովին ուրիշ մարդ է պ. Շիրվանզադէն: Սա նոյնպէս ընտրել է իր վէպի հերոս մի զաղափարական մարդ, մի մարդ, որ ծնուած է կոռուելու, բողոքելու հասարակական բոլոր կաշկանդող, մնչող մտքերի, հանգամանքների դէմ:

Մի մարդ, որի համար անհատի աղատութիւնը, անհատի մարդկային իրաւունքները, հասարակութեան լուսաւորութիւնը,—կեանքի և մահուան խնդիրներ են, որը այդ խնդիրների անունով պիտի ապրի, պիտի կռուի, պիտի զոհի ամեն բան: Այդ մարդը Արսէն Դիմաքսեանն է: Եւ այդ իդէալական մարդը պ. Շիրվանզադէի գրչի տակից զուրս է եկել, որպէս մի հրեշ, որպէս մի տարօրինակ „անօրմալ“ մարդ, մի Դօն Քիշօտ, որից խորշում են մարդիկ, որ ծաղրի ու հեքնութեան առարկայ է դա-

և ել Թիֆլիսի „ինտելիգենց“, ժամանակակից տիկինների ու օրիորդների լրջանում: Գալուստ անձնական դայր է հանունը կամ անունը մասնակից անունը մասնակից անունը: IV

Յողնենք մի կողմ այն հարցը թէ Արսէն Դիմաքսանի բնաւորութեան լաւ կողմերը, նրա գրաւիչ, ոգեսրիչ յատկութիւնները, ինչո՞ւ չեն գրաւում ընթերցողին, ինչո՞ւ ոգեսրութիւն, մէր, համակրութիւն չեն դարթեցնում ընթերցողի մէջ՝ դէպի այդ մարդը: Թողնենք, ասում եմ, այդ հարցը, ողովհետև այդ արդէն՝ հեղինակի տաղանդի, զգացմունքի խորութեան, ձիրքի, չնորդի խնդիր է, և եթէ պ. Շիրվանզադէն չւնի այդ ասաուածատուր, բնական պարբերութիւն մենք կատով խօ չենք կարող նրանից պահանջել. Հա ինտէ, և սудա ինտէ! Զենք կարող պահանջել, որ հեղինակը „անպատճառ“ համակրէ, սիրէ իր հերոսին, չենք կարող պահանջել, որ նա ոգեսրուի Դիմաքսանի նման մարդոց բողոքով անհաշտ, ուղղագիծ և գոռող բնաւորութիւնով: Զենք կարող պահանջել նոյնպէս, որ պ. Շիրվանզադէն խորը թափանցէր իր հերոսի հոգու մէջ, խորը ըմբռնէր, հասկանար և զգար, մեզ էլ զգացնել տար՝ այդ երիտասարդի ներքին աշխարհի վաևմ կոխները, տաստանումները, փոթորկները — նրա վիշտը, նրա ցաւերը: Այդ ամենը չենք կարող հեղինակից պահանջել: Բայց մենք, ընթերցողներս, կարծեմ իրաւունք ունինք պահանջելու, որ հեղինակը կարիկատուրա չը դարձնէր իր հերոսին, որ նա այսպիսի այլանդակ յատկութիւններ՝ թէ Փիզիբական և թէ հոգեկան, — չվերագրէր Դիմաքսեանին, որոնք միայն փացնում են նրա խակական կերպարանքը, զուտանք կամ ծիծաղ են յարուցանում ընթերցողի մէջ և, այդպիսով խանդարում են հասկանալ, գնահատել նրա բնաւորութեան արժանիքը, սիրել նրան

իր գաղափարական անկեղծութեան, իր անձնութրութեան համար: Այս, մենք իրաւունք ունինք պահանջելու պ. Ներ- վարդադէց, որ նա գոնէ յարգանքով վերաբերուէր դէպի այն մարդը, որ մարմնացնում է իր մէջ մեր կեանքի ամե- նալաւ, ամենաազնիւ, ամենաընտիր ոդին . . . Բայց տեսէք թէ պարոն հեղինակը, ինչպէս է վարուել նրա հետ: Նախընթաց դուժիներում ես դիմամեր ժողովիցի պատմութեան միջից այնպիսի կտորներ, որոնք միասին գումարած կարողանան ամփոփ և քիչ—շատ որոշ հասկա- ցողութիւն տալ Դիմաքսեանի անձնաւորութեան, նրա բնաւորութեան էական յատկութեանց մասին: Այն տեղ ամեն բան կանոնաւոր և բնական է դուրս գալիս և, տա- ղանդաւոր մի վիպասան, այդ տարբարական յատկութիւննե- րից կարող էր տեղծել հասարակական գործիչի մի տիպ, կարող էր զարգացնել նրա բնաւորութեան այդ արմատա- կան յատկութիւնները, կապել նրա հոգեկան, բնածին ըն- դունակութեանց, ձիքերի, տեմպերամենտի հետ, կարող էր ցոյց տալ արտաքին միջնորդատի ազդեցութիւնը նրա բնաւորութեան վրայ,—և կըստացուեր մի վէպ, մի պատ- մութիւն՝ լի հետաքրի հոգեբանական—հասարակական խնդիրներով: Պ. Ներվանզագէն չէ բարեհաճել այդպէս: Գոխանական լրացնելու Դիմաքսեանի բնաւորութեան գծերը, գոխանակ աստիճանաբար բաց անելու մեր առաջ այդ երիտասարդ գործիչի հոգին, նրա գործունէութեան, նրա ձգտումների, նրա գաղափարների ու համոզունքների ներքին մօտիւնները և արտաքին հանգամանքների ազդե- ցութիւնը—նա, պարոն հեղինակը, վերցնում այլանդա- կում է իր հերոսին՝ թէ Փիլիքապէս և թէ բարոյապէս, և այդպէս այսանդակ, ծիծաղելի կերպարանքով ման է ածում նրան ընթերցող հասարակութեան առաջ ի մմիթարու- թիւն և ի հրձուանս ամրող Փիլիքաբարական աշխարհն: . . . Ահա փաստեր, որ ապացուցանում են իմ այդ ասածները:

Միանդամայն անհասկանալի, անբացատրելի գաղանիք է մուռմ ինձ համար թէ ինչու պ. Ներվանզագէն կարծում է, որ Դիմաքսեանը անպատճառ պիտի հասակով թղորկ լինի, որ նրա զլլի անազին մեծութիւնը պիտի աւելի որոշ ցոյց տայ նրա մարմնի վոքրութիւնը, որ նրա քիթը պիտի ծուռ լինի, երեսը այնքան տգեղ, որ նրա ընկեր- ներն անգամ ամաչեն նրա ներկայութեանը խօսել որ և է մարդու գեղեցկութեան մասին: Հեղինակը բարեհաճել է զրկել իր հերոսին այն տեսակ ընական, ընդհանուր մարդ- կային յատկութիւններից, ինչպէս են հասակի և զլլի կանոնաւորութիւննը, բնական միմէստրիան, քթի բերանի և աշերի մարդավայել դասաւորութիւնը: Հեղինակը բարեհաճել է՝ տգեղ, այլանդակ, բոլորո- վին անբնական, ծիծաղելի կազմուածքով դուրս բերել իր հերոսին: Տեսէք: „Նա (Դիմաքսեանը) վոքրահասակ էր, նիհար, բայց կործքը, մարմնի համեմատ՝ լայն էր և առողջ:“ „Նրա քթի պնդերը լինեցնում էին արարական նժոյգի ուռնգեր:“ Աչքի առաջ ունենալով Դիմաքսեանի մարմնի արմատական թերութիւնները և արատները, հե- ղինակը ամրող իր պատմութեան ընթացքում, հէնց այն է, հնարում է զանազան դրութիւններ, զանազան հակա- պատկերներ, թէ մարդոց և թէ շրջապատող առարկաների հետ, որտեղ որոշ արտայայտում է երիտասարդի Փիլիքա- կան այդ պակասութիւնները և ինքը հեղինակն էլ հաճու- թեամբ, առանձին արուեստագիտական տերմինալօգիստյով՝ նկարագրում, պատկերացնում է այդ ամենը: Օրինակ, Դի- մաքսեանը երկրորդ անգամ այցելութեան է գնում Բար- տամեանների մօտ: „Թէյի սեղանի շուրջը, տիկին Բար- տամեանների հետ միասին նստած էին մի դեռահաս աղջիկ գիմնազիօնի համազեւսով և մի չափահաս օրիորդ:“ „Դի- մաքսեանը, որ սովորաբար ամօթիսած էր, շփոթուեց որիկ- նոց ձեռքը սեղմելիս: Գիմնազիօնի աշակերտուելին, յայտնի

Հէ ինչու, (իրը թէ յայտնի չէ.) ծիծաղեց և վաղեց միւս աննեակուն. “Մի ուրիշ անգամ Դիմաքսեանը նստած էր Քախառամեանների տանը, բազկաթուի վրայ, ”Նրա դէմ ու դէմ պատին քաշ արած էր մի մեծ հայելի. Մինչեւ այժմ նա այդ չէր նկատել, Յանկարձ նրա հայեացքն ընկաւ իւր փոքրիկ կերպարանքի վրայ, և նա մի անորոշ ցնցողական շարժում գործեց. Ա՛յ, որքան նա պատիկ և աննշան էր այդ բոլէին իւր աշքում. Փափուկ բազկաթուը ագահութեամբ ամբողջավին կանել էր նրան, և միւսն երևում էր նրա խոչոր գլուխը.” (եր. 46) Մի այլ օրինակ. Դիմաքսեանը պատրաստուել է արդէն բարձրանալ ամբիոն, դասախոսութիւնն կարգարու համար. Պ. հեղինակը քան թոյլ տալ իր հերոսին դասախոսութիւն կարդալ, մէկ արժան է համարում նրան ծաղրել, նա առում է. „Այդ միջոցին դասախոսը մօտեցաւ հայելոն փողկապը ուղղելու. Նա հագած էր ֆրակ, որ նրա փոքրիկ ու սկրոտ մարմնի անկանոն մասերը աւելի որոշ էր կացուցանում. Հայելու մէջ նա տեսաւ իր ետեսում կանգնած Բարաթեանին. Մօտալուա համեմատութիւնը դարձեալ գրգուեց նրա բնական նախանձը” (եր. 57). . . Դիմաքսեանը հիւանդացել է. Այդ հիւանդութեան ժամանակ, գիշերը մինակ մնարով իր մենեակում, նա վեր է առնուում հայելին և սկսում է նայել իր վրայ. ”Ահա նա, այն կերպարանքը, որին ամենքը ծաղրուամ են. Ահա այն խորը թաղուած մշերը, երեսի թուխ և կոշտ կաշին, նօսր միրուքը, սպեկ բերանը, լայն սեացած աստամները. Իսկ հասակը. Նա հայելին պահեց գլխի վրայ, կիսանորդ գոնական ձևով և նայեց իսպան ոսից մինչև գլուխ. Ա՛յ, որքան նա փաքրիկ էր, որքան չնշին, ինչու նա այդպէս է ծնուել, ինչու նրա ահազին գլուխը տեղաւորուած է այդ մի քանի թզաչափ մարմնի վրայ. Ինչու նա և ոչ ուրիշ. Անէծք բնութեանը, անէծք նրա օրէնքներին,

անէծք ամբողջ տիեզերքին, անէծք նրա աներևոյթ զօրութեանը.” (եր. 136) „Նա հայելին բարձրացրեց գլխից վեր և բոլոր ոյժով զարկեց սենեակի յատակին. Ապակին շըրջանից բաժանուեց, փշուեց. ”Հայելինների և Դիմաքսեանի պատմութիւնը ահազին տեղ է բռնում զբքի մէջ. Որպէսզի ընթերցողը ինձ չը մեղադրէ չափազանցութեան, միակողմանիութեան համար, ևս ստիպուած եմ ամբողջովին արտազրել զբքից այդ պատմութիւններից մի քանիսը. Թողը ընթերցողը նեղութիւն քաշէ կարգալ այդ ամենը. շատ կարեոր է այդ. Հիւանդութեան ժամանակ, իրը թէ Դիմաքսեանը զառանցում է. ”Նա միայնակ է,— դարձեանոյն հիւրասենեակում. Նրա հայեացքը ընկնում է դիմացի հայելու մէջ. Այստեղ նա տեսնում է իր ամրող կերպարանքը նկարուած ոտից մինչև զլուխ. Տէ՛լ Աստուած, ինչ բանի է նմանում նա. Այստերի ոսկորները դուրս ընկած, ահուելի բերանը լայն բացուած, լըթունքները լնդերքին կածած. Աչքերի փոխարէն մժին խորչեր, ականջները սեւացած, պարանոցը ոսկորացած. Խոկ մարմինը. Խնչ պըստիկ զազրելի կերպարանք. Այն, իրաւունք ունէ Գայիհանէն նրան ատելու, նա մարդկային կերպարանք չունէ, նա հրել է, ճիւալ է” (եր. 134).

Ընթերցնող, ևս ուղակի անպատուած, վիրաւորած կը վնէի ձեզ, եթէ մէկէլ ուկսէի բացատրութիւններ տալ այս իմ առաջ բերած փաստերի առթիւ. Նրանք այնքան խոչոր են, այնքան աչքի ընկնող և կոպիտ են, որ ամեն բան բացարուած են իրանցով. Աւելի լաւ է, նեղութիւն քաշեցէ. Ելի կարդալ նմանօրինակ մի երկու փաստ. Դիմաքսեանը գնացել է թարուն. ”Ներկայացումը վերջանալուց յետոյ, նա խուռն բազմութեան մէջ տեսնում է իր նախկին ընկեր Բարաթեանցին, որը, չնորհիւ իր գեղեցիկութեան, կարողացել է զրաւել Դիմաքսեանի սիրած օրիորդի Գայիհանէի սիրած. Այժմ նրանք երկուսով դուրս են

գալիս թատրոնից, իսկ թշուառ Դիմաքսեանը մնում է նայելով միայն: „Երբեք նա այնքան փոքրիկ, ճնշուած, սեղմուած չէր իւր աշքում, որքան այժմ: Նա կարծում էր, որ ամենքը խոցում են իրան, ծաղրում են և ծիծաղում: Մարդկանց խառն-խուռն շարքերի մէջ նա երևում էր՝ ինչպէս ծուռ քուսած մի ծառ անտառում: Նրա փոքրիկ մարմինը հրփում և մղփում էր ամեն կողմից, ինչպէս մի տաշեղ ալիքների մէջ: Եւ այդ աւելի սասակացնում էր նրա սրափ կրակը: Ճնշեցէք, ճնշեցէք այդ տնեւ մարմինը: Նա ծծում է իւր ներսը դինամիտային մի թունաւոր և պայթուցիկ ոյժ: Կը գայ ժամանակ, որ այդ սզմուած կարծրացած ոյժը այլ ևս չի դիմանալ արտաքին ճնշումներին“ (եր. 81). Վերջապէս առաջարկում եմ ընթերցողի ուշադրութեանը մի զարմանալի տեսարան, որ կատարեալ ապացոյց է ալ. Շիրվանզագէի գեղարուեատական-ծաղրանկարչական խոչոր տաղանդին: Տեսարանը ներկայացնում է Արսէն Դիմաքսեանը իր ծառայի հետ: „Դիմաքսեանը նստեց և դարձեալ նայեց ծառային: Մի քանի վայրկեան անցած նա կամացով վեր կացաւ տեղից և սկսեց անցուդարձ անել, աշխատելով որքան հնար է, խոչոր քայլեր անել: Կարծես նա մի խորին գրամատիքական դեր էր փորձում, որ պէտք է կատարէր:

Ստէպ, ստէպ նա աշքի տակով դիտում էր ծառային: Իսկ ծառան կանգնած էր, կոշտ և սկացած ձեռները փորի վրայ դրած:

Դիմաքսեանը անցնում էր նորա մօտով: Ե՛ւ նկատելի էր, որ ամեն անգամ անցնելիս՝ աւելի և աւելի մօտենում էր ծառային, ինչպէս մի խորամանկ կատու իր որպին:

Գիշերուայ լուռութեան մէջ, կանթեղի աղօտ լրցով, այդ երկու տարօրինակ կերպարանքների հարեանութիւնը մի խորհրդաւոր տեսարան էր ներկայացնում: Մէկը անշարժ կանգնած էր սենեակի մէջ տեղում, միւսը պտտում

էր նրա չուրջը: Երբեմն Դիմաքսեանը այնքան մօտենում էր Սիրականին, որ քիչ էր մնում նրանց ուսերը միմիանց զարկուէին:

Եյժմ ծառան մարմնացած ապշութիւն էր ներկայացնում: Նրա հայեացը հետեւում էր Դիմաքսեանին: Կարծես, մի մագնիսական ոյժ բեկեռել էր նորա ոտները յատակին: Նա ոչ խօսում էր, ոչ շարժվում և ոչ էլ, կարծես, ուզում էր շոնչ քաշել: Միայն նրա թաւամազ երեսը պտտում էր աջ ու ձախ, ինչպէս ծխնելուզի թիթեղիայ հողմավար:

Յանկարծ Դիմաքսեանը մի վայրկենաչափ կանդ առաւ ծառայի կողքին: Նա ուսը մօտեցը սիրականի ուսին, նայեց նորա աչքերին, ճակատին, կրծքին: Յետոյ մի ճարպիկ շարժուածքով հեռացաւ նրանից մի քանի քայլ և թոյլ ձայնով արտասանեց, — ինչ կարճես, Սիրական:

Եւ բարձրաձայն ծիծաղեց: Դա մի անսավոր ծիծաղ էր, մի ծիծաղ, որի մէջ չէր զգացվում ոչ ծաղը, ոչ գառնութիւն և ոչ գուարճութիւն, այլ աւելի բարկութիւն:“ (եր. 35.)

Այս տեսարանը երեխ շատ մեծ գուարճութիւն է պատճառել որոշ տեսակի մարդոց: Զուարճաւէր ընթերցողը անշուշտ խորը գոհունակութեան ժամանով կը մտարերէ վէալի այդ անմոռանալի կտորը . . .

V

Եհա այս տեսակ արտաքին, գիշերական թերութիւններով օժտուած և ներքին բուռն ցանկութիւններով, կրքերով պաշարուած՝ Արսէն Դիմաքսեանը մտնում է կեանքի մէջ, մտնումէ հասարակական գործունէութեան մէջ: և այս էլ միակ նպատակով՝ դարձնել կեանքի սովորական ընթացքը իր ուզածի պէս, տալ շրջապատող հան-

գամանքներին իր ուղեցած գոյնը: “Նա իր առաջին քայլափոխում հանդիպում է խոչնդուների: Եւ, որ ամենանշանաւորն է, այդ խոչնդուները չունին հասարակական բնաւորութիւն, չունին մինչև անգամ հոգեբանական բնաւորութիւն, այլ բոլորովին պատահական մի հիւանդուս, պատարօգիկական երկոյթ են ներկայացնում: Դիմաքսեանը, լինելով հասարակական դործիչ, լինելով բարձր գաղափարների, ձգումների տէր մարդ, ստիպուած է կուռել ոչ թէ արտաքին շրջապատող սպայմանների դէմ, այլ իր սեփական թերութեանց, արատների դէմ, ստիպուած է կուռել ինքն իրա հետ . . . Խոկապէս, Դիմաքսեանի բնաւորութեան մէջ՝ խիստ կերպով պէտք է որոշել երկու զանազան, միմեանց հակասող՝ տարրեր: Մէկ այն, որ յատուկ է խոկական Դիմաքսեանին, որպէս հասարակական լայն ինստինկտաների տէր մարդու, և մէկ էլ ալ, Շիրվանգաղէի մոկոնած Փիզիքական և հոգեկան այլանդակութիւնները, որոնց մասին ես արդէն խօսեցի մասսամբ նախընթաց զիստում: Թէ ինչու անպատճ առ հեղինակը կամեցել է այլանդակել իր հերոսին, ինչու նա կամեցել է այդքան անվայել կերպով ծաղրել Դիմաքսեանի նման ախալը՝ (Ես ենթադրում եմ, որ հեղինակի կարծիքով՝ Դիմաքսեանը մի հոգեբանական ընդհանրացումն է, մի տիպ է և ոչ մի պատահական անհատ:)—Այդ իրա, հեղինակի գիտենալու բանն է: Բայց որ նա իրաւ կամեցել է այլանդակել և նոյնիսկ այլանդակել է Դիմաքսեանի թէ արտաքին կերպարանքը և թէ ներքին, հոգեկան ձիրքերը—այդ մասսամբ սպացուցուեց և մասսամբ էլ կ'ապացուցուի յետագայ գրութեանս մէջ: Ապացուցուեց այն, որ պէտք է Շիրվանգաղէն վերագրելով Դիմաքսեանին ամեն տեսակ Փիզիքական արատներ^{*)} որոնք

բոլորովին անհրաժեշտ չեն մի հասարակ մահկանացը՝ համար անգամ—ուր մնաց հասարակական գործիչ, որոնք թէև պատահում են մարդոց մէջ, բայց չառ ապագիւտ, բացառիկ դէսքերով, հեղինակը ակնկայտն կերպով՝ այլանդակել է իր վէպի հերոսին, նրան մնդանուր ծաղրի, հեգնութեան, արհամարանքի առարկա և դարձրել նոյնիսկ ինքը, հեղինակն էլ է ծաղրում երան: Այս ապացուցուեց: Խոկ որպէս զի ապացուցանենք, թէ՝ արտաքին, Փիզիքական այլանդակութեանց հետ զուգընթացարար՝ հեղինակը այլանդակել է Դիմաքսեանին և հոգեպէս—քննենք վէպի այն տեղերը, ուր արտայացովում են հերոսի բնաւորութեան ստոր, գծուծ, մանրակրկիտ յատկութիւնները: Ես թողնում եմ խոկական Դիմաքսեանին, և դէալիստ, ազնիւ, վեհանձն, յանդուգն, ազատախօս հասարակական գործիչն:—Նա, իր բնական, „նօրմալ“ յատկութիւններով՝ արժան է մեր բոլորի (բայց պէտք է Շիրվանգաղէի նմանների, ի հարլէ:.) խորը համակրութեանը, մեր ամենաջերմ և անկերծ սիրուն: Ես թողնում եմ այդ մարդու, այդ անփին տիպի խոկական, բնորոշ գծերը: Վերցնում եմ Դիմաքսեանին այն բոլոր արատներով, ստոր կրքերով հանդերձ, ինչ որ արդիւնք են հեղինակի կարիկատուրիստական տաղանդի:

Լիներով ինքը տղեղ՝ Դիմաքսեանը ինքնարերարար (գուցէ և հեղինակի ցանկութեամբ) մի տեսակ ատելութիւն է տածում դէպի գեղեցկութիւնը՝ թէ տղամարդկանց և թէ, մանաւանդ, կանանց մէջ, և ընդհակառակ՝ առանձին համակրութիւն և սէր է տածում դէպի տղեղ, այլանդակ երեսով մարդիկ: Դիմաքսեանի ծառան, Սիրականը, մի

^{*)} Զարմանալի է, որ առ հեղինակը մոռացել է վերաբերել իր հերոսին դարձեալ մի քանի արատներ:—Կազութիւնն

^{*)} Զարմանալի է, որ առ հեղինակը մոռացել է վերաբերել իր հերոսին դարձեալ մի քանի արատներ:—Կազութիւնն

սաստիկ այլանդակ գէմք ունի. նա հենց առաջին անգամց գրաւում է պարոնի ուշը: —Գիտեմ, որ ինձ դուք ես գալիս, կարգալ գիտե՞ս: Սիրականը առաջին անգամից դուք է գալիս պարոնին, —ինչո՞վ, Կասկած չը կայ, որ միակ իր տգեղ, ծիծաղելի կերպարանքով . . . Բարաթեանը կիսահանաքի, կիսահեգնական եղանակով խօսում է կանաց գեղեցկութեան մասին: Դիմաքսեանը տաքանում է այդ առթիւ: Մենք պէտք է խոնարհուենք խելքի զօրութեան առաջ և ոչ թէ գեղեցկու աչքերի և սիրուն այտերի հրապոյթց լանանք: Եւ յետոյ աւելացնում է, „Գեղեցկութիւնը երբեմն մարդկանց անբարոյականացնում է“ . . . Այս ամենը միայն ապացուցանում են, որ Դիմաքսեանը խկապէս շատ մեծ նշանակութիւն է տալիս իր տգեղութեանը և այդ հանգամանքը ահազին հոգախ, մոտատանջութեան առարկայ է գառել նրա համար: Եւ նրա նկատողութիւնը, թէ — „Քիզիօնումիսաների դարը անցաւ,“ —որ անում է մի անգամ իր ընկեր բժիշկին՝ խկապէս անկեղծ նկատողութիւն չէ, ինքը, որ ամեն անգամ հայելիների մէջ իրան տեսնելիս վրդովիում է, որ ուրիշ գեղեցկութեանը միշտ նախանձով է նայում, —նա երբէք չի կարող անտարբեր լինել դէպի մարդու արտաքինք: Մի անգամ Դիմաքսեանը սաստիկ բարկացած էր, ինչ որ դրսի տապաւորութեանց տակ: „Ներս մոտաւ սիրականը (ծառան), որ նրա կօշիկնելը տանի պրեկու, Դիմաքսեանը մի զննող հայեացք ձեց նրա վրայ: Նրա կառաղութիւնը մեղմացաւ, և նա աւելի խորը նայեց ծառայի ծուռ ու մուռ հասակին: Կարծես, հաճելի էր նրա համար՝ դիտել այդ տգեղ մարդուն, որը լուռ կանգնած էր նրա առաջ իւր աղաւաղուած բերանը կիսով չափ բաց, միլ աչքերով և տափակ քթով:“ (Եր. 34) Սրանով անշուշտ հեղինակը ուզում է ասել թէ՝ իր հերոսը, իինելով բնութիւնից պատժուած բաւականանութիւն է զգում, երբ տեսլի տական մասին:

մարդոց, ուրախանում է նրանց այլանդակութեան, տղեղութեան վրայ: Մարդկային հոգու ամենազգուելի, ամենաստոր յատկութիւններից մէկն է՝ չարախնութութիւնը, ուրիշ թշուառութեան վրայ ուրախանալը: Եւ ալ. Շիրվանգաղէն, առատօրէն վարձատրել է այդ կողմից Դիմաքսեանին: Ի հարկէ եթէ նա չարախնուած է, եթէ նա ուրիշ թշուառութեան, ամբազտութեան, այլանդակութեանը, ուրախացող է, —անշուշտ նա չը պիտի կարողանայ համբերել և ուրիշ առաւելութիւնը, ուրիշ աջողութիւնը, երջանկութիւնը, —նա պիտի և նախանձու լինի: Եւ Դիմաքսեանը, հեղինակի բարեհաճ կամքով՝ նախանձի մեծ պաշար կրում է իր մէջ:

Բախտամեանների տանը խօսակցութիւն է լինում ինչ որ մի բարեգործական ընկերութեան մասին, որ կանաք են ուզում հիմնել: Վիճում են այն մասին թէ՝ ով է եղել այդ ընկերութեան հիմնողը, առաջին անգամ միտք յայտնողը, —գուրս է գալիս, որ Բարաթեանն է եղել այդ, — Դիմաքսեանի ընկերը: Հեղինակը դրանից յետոյ աւելացնում է: „Այս նորութիւնը Դիմաքսեանի սրտում զարթեցրեց մի տեսակ անախորժ զգացում: Խնչապէս, նա, որ այնքան պաշտպանել է և պաշտպանում է կանաց ինդիքը, յանկարծ հեռու է մի գործից, որ կանաց ինքնուրոյնութեան առաջին բայցն է որոշում: Ահա ինչ ասել է հասարակութիւնից հեռու մնալ: Նրա (Դիմաքսեանի) յուզմունքը աւելի սաստկացաւ, երբ տիկինն ասայ թէ՝ ապագայ ընկերութեան կանոնադրութիւնը կազմող մասնաժողովի անգամ է ընտրուած և՝ Բարաթեանը: „Դիմաքսեանը այլ ես չի կարողանում զավել իրան, նա նկատում է թէ՝ չէ հաւանում, որ կանաքը իրանց հէնց առաջին հասարակական գործի մէջ տղամարդկանց էլ խառնում են: Աւելի լաւ է բոլորովին անկախ գործել, Պէտք է հէնց սկզբից սովորել ինքնուրոյն գործունեութեան:“ Եւ այլ սրա նման

ուրիշ ծակ վիլխովայութիւններ, որոնք միայն ստոր, չնչին, երեխայական նախանձից են առաջ գալիս: Եթէ Դիմաքսեանը այդքան նախանձու է, ուրեմն ինքն էլ պիտի լինի չափազանց փառասէք կամ փառամոլց եւ ճշմարիտ, նա այնքան սնափառ է, որ շատ անդամ նոյնիսկ ծիծաղելի է դառնում ընթերցողի աշբում: Գոնէ այդպէս ուզում է հաւատացնել մեղ հեղինակը:

Ներսիսեան դպրոցի հոգաբարձուն մի կամացինեան է, անում Դիմաքսեանին: Այդ առթիւ տեսէք թէ հեղինակը ինչ է ասում: „Բայց աւելի համելի էր նրա ինքնասիրութեան համար հոգաբարձուի ասածը, —ձեր անունը ձեզանից առաջ է հասել: Այս դարձուածը նրան մի առանձին աշխոյժ տուեց, և նա ողերուեց:“ (եր. 11)

Ներսիսեան դպրոցում ուսուցիչ եղած ժամանակը՝ Դիմաքսեանը մի երեկոյ՝ ուսուցչական ժողովում կարդում է մի զեկուցում՝ աշակերտների ազատութիւնը յարգելու, չը ճնշելու մասին: Այդ առթիւ ժողովում շատ վիճաբանութիւն է լինում: Բարձր դասարանների աշակերտները, երբ լսում են՝ անկանած սաստիկ համակրում են Դիմաքսեանի կարծիքներին և մի օր դարձասի մօտ հաւաքուած՝ նրան ժափահարում են այդ իւր մոքերի համար: Լսեցէք թէ հեղինակը ինչ է ասում իւր հերոսի մասին: „Նա ողերուեց, մուացաւ իւր կրած անախորժութիւնը, սրտում զգաց մի տեսակ ուրախութիւն:“ Այդ դեռ ոչինչ, գարձեալ լսեցէք: „Մի վայրկեան նրան թուաց, թէ ինքը հալածուածների, թոյլերի պաշտպան է: Եւ նորա սրտում զարկեց հերոսական փառասիրութեան երակը:“ (եր. 20): Դօն-Քիշնա, կատարեալ Դօն-Քիշոտ է ձեր Դիմաքսեանը պ: Շիրվանգարէ, այդ էք ուզում ապացուցանել: Եւ նրա Սանխօն էլ գիտէք ո՞լ է, —Մսերեանն է, որին դուք միամբուների աշքը խարելու համար իդէալիստ էք անուանում:

Թէ ո՞ր աստիճան ճիշտ են իմ ասածները թող ինքը ընթերցողը դատէ հետեւեալից:

Սի օր Դիմաքսեանը և Մսերեանը գնում են կաթնասուն: (Թիֆլիզում կաթնասուներ շատ կան:) Թէյ խմելու ժամանակ՝ սենեակի միւս անկիւնից լսում է տաք վիճաբանութիւն, և վիճաբանողներից մէկը՝ յանդիմանելով իր խօսակցին, պարզ արտասանում է հետեւեալ խօսքերը: „Եր զէ ասում Դիմաքսեանը, թէ յետադէմները գլուեն միայն պատի ետևից կուռել:“

— Ի՞նչ Դիմաքսեան:

— Նա, որ հնապաշտների անմիտ կուռքերը ջարու ու փշուր է անում: „Տարիքաւոր պարոնը ուսերը թօժից և դուրս եկաւ: Միւսները նոյն վայրկեանին նկատեցին Դիմաքսեանին և, միաժամանակ շփոթուելով՝ կամացով դուրս գնացին:“ Այս դէպից յետոյ շարունակում է հեղինակը, հետեւեալ կերպով: „Դիմաքսեանի սիրաը լցուեց անսահման ինքնագուռութեամբ: Այդպէս ուրեմն, արդէն նրա մասին խօսում են, նրա խօսքերը ապացոյց են բերում, նրա առաջ խոնարհում են: Ահա խեցի ոյժը: Եւ ո՞վ կարող է այսուհետեւ խօսել, թէ նա կոչված չէ հասարակական մոքի առաջնորդ գառնալու: Դարձեալ նա բարձրացաւ իւր աշքում, մուացաւ մի քանի ըստէ առաջ կրած անախորժութիւնը: Նա զգաց իւր մէջ մի այնպիսի բարոյական ոյժ և ողերութիւն, որ մինչև այդ ժամանակ չէր զգացել: Լսեցիլ, ընդհատեց նրա մոքերը Մսերեանը, —կը նշանակէ խօսքդ արդէն սկսել է աղդել, շատ ուրախալի է այդ:

Դիմաքսեանը պատրաստ էր զրկել և համբուրեն ընկերոջը, այդ բարեսիրտ, աննախանձ և սիրելի Մսերեանին:

Նա շտապից դուրս գալ կաթնասոնից: Այժմ նա զգում էր աշխատելու անզսպելի պահանջ: Ո՞չ, չը պիտի

մտածել ուրիշ ոչ մի բանի մասին, պէտք է գործել, օգուտ
բերել և անուն վաստակել: Խելքի ոյժով ուսնաստակ անել
մարդկանց ծաղըը, արհամարանքը: Թող անուշադիք թողնեն
նրան գեղեցկադէմ կանայք, կը գայ ժամանակ՝ ամենքը կը
խոնարհվեն և երկրպագութիւն կը տան նրա հանճարին:
Երբէք նա չի ընկնիլ աշխարհի հաճոքների յետից: Եր-
բէք իւր թանկադին օրերը չի վատնիլ անմիտ կենցա-
ղավարութեամբ: Սիրել մէկին՝ ինչո՞ւ, քանի որ կարելի է
միեւ ամբողջ մարդկութիւնը: Սիրել արդեօք: Ո՞չ, ատել
և ատելով հանդերձ գործել ամենքի համար: (եր. 53-54.)

Այստեղ արդէն ամեն բան պարզվում է: Պ. Շիրվան-
զադէի հոգերանական խորագիտութիւնը հասնում է իր
ասպօգէն, որից դէնը անպատճառ սկսուելու է անկում,
կրկնութիւն: Եւ ես իմ առաջ բերած փաստերը բաւական
եմ համարում, որ ընթերցողը կարողանայ պարզ երեակա-
յել թէ՝ ինչպէս է նայում հեղինակը: Դիմաքսեանի վրայ:
„Օգուտ բերել և անուն վաստակել“ — ահա, հեղինակի
կարծիքով՝ Դիմաքսեանի կեանքի նպատակը: „Խելքի ոյժով
ուսնաստակ անել մարդկանց ծաղըը, արհամարանքը“ —
ահա այն մօտիւը, որ հեղինակի կարծիքով՝ դրդում է Դի-
մաքսեանին դէսպի դրծունէութիւն: Եւ այդ երկու դրու-
թիւնները ապացուցանելու համար, հեղինակը անագին
աշխատանք է յանձնառու եղել, նախ խսորել, աղաւա-
զել է Դիմաքսեանի ամբողջ մարմնը — դիմից մէնչև ուս-
ները: յետոյ, զուգընթացարար դրան, աղաւազել, փչացըն-
է նրա հոգեկան ձիքերը, վերագրելով նրան՝ չարախնդու-
թիւն, նախանձ, սնափառութիւն, և էլ չըդիտեմ թէ՝ ինչ
մահացու և ներելի մեղքեր:

VII

Ի՞նչ է պատճառը, որ պ, Շիրվանզադէն այդքան
վայրացած է Դիմաքսեանի վրայ. ինչ է պատճառը որ հե-
ղինակը, խոստովաներով իր հերոսի աչքի ընկնող մտաւոր
կարողութիւնը, նրա օգտաւէտ հասարակական գործունէ-
ութիւնը, նրա վերին աստիճան ազնիւ, անկեղծ և անխար-
դախ բնաւորութիւնը՝ դարձեալ չի կարողանում գրաւուել
նրանով, գարձեալ այդչափ քծախնդրօրէն աշխատում է
մժմայցնել, արաստորել, մեացնել նրա խսկապէս մաքուր
և լուսաւոր պատկերը: Նրա պատճառը այն է, ընթերցող,
որ Դիմաքսեանը և պ, Շիրվանզադէն տարբեր մարդիկ են
Դիմաքսեանի բնաւորութեան մէջ կայ մի տարր, մի կեն-
դրունական յատկութիւն, որ կազմում է նրա հոգու էու-
թիւնը, նրա ըոլոր հոգեկան — բարոյական ոյժերի խարիս-
նը. — այդ նրա ինքնասիրութիւնն է, նրա „ես“ն է, որին
պ, Շիրվանզադէն անուանում է „օձ“: Նոյն խոկ այդ օձ
խօսքը, ինքն ըստ ինքեան ցոյց է տալիս թէ՝ որ աստիճան
վայրացած է մեր վիստասանը: Մի փոքր հեռանանք հար-
ցից:

Հասարակական կեանքի մէջ ապրող և հասարակա-
կան խնդիրներով լուրջ զբաղուող մէկին չի կարող չը
հետաքրքրել մարդու անհաստականութեան խնդիրը: „Ան-
հատ“, „անհաստականութիւն“, „անհատի ազատութիւն“ —
այս խօսքերը, թէև չուտ-շուտ լսվում են մարդկանց բե-
րանից՝ բայց խսկապէս այժմ կորցըել են իրանց ներքին,
գաղափարական իմաստը: Բուրժուազական կեանքի ողին
— փողը, կավիտացը իր ամենակարող ոյժով՝ ստրկացըրել է
մարդուն մինչև այն աստիճան, որ նա իր բարոյական
հասկացողութիւններն անգամ պայմանաւորում է հարաւու-
թեան, փողի տեսակէտով: Փող աշխատելը, փող դատելը՝
դառել է մեր ժամանակի մարդոց զվատոր և միակ նպա-

տակը, —մի նպատակ, որի առաջ չքանում են կեանքի բոլոր միւս խնդիրները, որովհետև առանց փողի՝ չկայ ապրուստ, չկայ և կեանք: Փողը, լինելով ապրուստի, կեանքի միակ և եթ միջոցը՝ ստացել է մեր ժամանակում սարսափելի, ճակատագրական մի ոյժ, —ոյժ, որի առաջ ոչինչ են բոլոր թէ բնական և թէ սօցիալական ոյժերը: Փողը ստիպում է մարդուն ամեն բան անել. նաև է, որ հրամայում է բանուրին առաւտափց մինչև երեկոյ՝ անասունի պէս լարել իր մկանունները, նաև է, որ վակուած պահում է արհեստաւորին իր արհեստանոցի մէջ, վաճառականին՝ իր կրտակի մէջ, աստիճանաւորին՝ իր կանցելեարիայի մէջ: Ոչ ոք չի կարող ճակառակուել փողի կամքին, փողի հրամանին . . . եթէ նա ուզում է ապրել, եթէ նա ուզում է կեանք վարել: Խոկ միշ չի ուզում ապրել: Այսպէսով ընկած ապրուստի, ուրեմն և փողի ետևից, մեր ժամանակի մարդը մոռանում է ինքն իրան և ամեն բանում աշխատում է յարմարուել փողի պահանջին, փողի „հաճոցքին“: Մարդու հոգեկան ձիրքերը, բարոյական պահանջները այստեղ երկրորդական տեղ են բըռնում, և շատ-շատ անդամ մարդը ստիփուած է խայցնել իր մէջ բնական ձիրքերի, ճակումների պահանջը և անել իր սրտին ու հոգուն համապատասխանող գործ, բայց փողի տեսակէտից՝ շահաւէտ գործ: Մարդը, որպէս բարոյական անհատ, որպէս մի խելացի, ինքնուրոցն, ազատ! —իր մըտքերի, իր գդացմունքների, իր գործերի մէջ՝ էակ՝ չկայ այս հանգամանքներում: Մարդ՝ բայն մտքով, մարդ բարոյական, իմացական մտքով՝ միանդամայն անհամականալի է՝ կապիտալիստական բէժիմով խմճաւած մեր ժամանակում: Այս, մարդիկ չկան . . . Կան մշակներ, արհեստաւորներ, վաճառականներ, աստիճանաւորներ, զինուրականներ, գիտնականներ, հոգեւորականներ, քժիշկներ, ուսուցիչներ, փաստաբաններ, նկարիչներ, երաժիշտներ և այլն և այլն:

Սէկ խօսքով՝ կան պարագ մուռ և ներ և այդ պարագ-մունքները կատարող պաշտօնեայներ: Եւ ամեն մարդ, ամեն մի „ընախօսական անհատ“ աշխատում է մտնել այդ պարագմունքներից, այդ պաշտօններից մէկի մէջ, աշխատում է այդ պարագմունքի, կամ պաշտօնի մէջ ամրացնել իր տեղը, որպէսզի ապահովի իր կեանքը, որպէսզի մշտական կանոնաւոր, և անընդհատ ուսմիկ առանայ՝ „վոր դատի:“ Ամեն բան վերջ ի վերջոյ գալիս կանգնում է ուսմիկի— փողի վրայ . . . Եւ մեր ժամանակում շատ սովորական մի բան է, որ մարդ իր ամբողջ կեանքը (!) նուիրում է մի պաշտօնի, մի ծառայութեան, մի զբաղմունքի, ամբողջ կեանքում անընդհատ, ամեն օր կատարում է միենոյն գործը, միենոյն ծառայութիւնը,— եթէ խօսենք աւելի ուսումնակուն ոճով՝ —ամբողջ կեանքում նա գործում է իր միենոյն, որոշ ուղեղային կենդրուններով,— միենոյն, որոշ Փիվլքական կամ հոգեկան ոյժերով: Մարդը, որպէս մի հոգեբանական ամբողջութիւն, որպէս մի ամբողջ բարոյական անհատ! —իր բոլոր ձիրքերով ու ընդունակութիւններով՝ հարկաւոր չէ նրա այս, կամ այն ձիրքը, այս կամ այն ընդունակութիւնը, ոյժը: Ամենակարող կապիտալը՝ բաժաներով՝ մարդկանց մէջ զանազան աշխատանքներ, կապում է նրանցից խրաքանչիւրին մի աշխատանքի հետ և այդպէսով մարդու ամբողջութիւնից, նրա բազմակողմանի ընդունակութիւններից միայն մէկը աշխատեցնում, ժառայեցնում է իր կապիտալիստական շահերին, իսկ մնացած մասերը թողնում է անգործութեան մէջ, մատնում է յաւիտենական թմրութեան, քայլքայման, „ատրօֆիայի“: Եւ հասարակութեան մէջ մենք չենք տեսնում ամբողջ բարոյական անհատները, այլ տեսնում ենք հոգեկան—բարոյական անդամալոյններ, որոնց մէջ մի տեսակ՝ թէ Փիվլքական, թէ հոգեկան—ոյժը և այդ ոյժի արտայացուղ գործարանը

դարգացած է այնչափ շատ, այնչափ անկանոն, որ իր դործունէութեամբ կլանում է մարդու միւս ընդունակութիւնների, միւս գործարանների կանոնաւոր ֆունկցիան։ Այս դեռ մեղալի մի կողմն է, դարձնենք միւս երեսը։

Կապիտալիզմը, լիներով մեր ժամանակի ողին, տուել է մարդոց բոլոր գործերին և յարաբերութիւններին մի տեսակ նեղ—նիւթապաշտական, մերկանտիլ բնաւորութիւն։ Որովհետև մարդոց զվասաւոր նպատակը փող դատելն է և այդ փողի համար նրանք զանումն իրանց ամեն, նաթանգագին սեփականութիւնն անգամ—իրանց ներքին հոգեկան բարոյական ազատութիւնը՝ ուստի մարդոց աչքում փող դատելու, հարստանալու ընդունակութիւնը ամենաբարձ ընդունակութիւնն է համարվում, և պարապմունքներից էլ՝ այն պարապմունքը ամենից շատ յարգ ու պատիւ ունի այժմեան հասարակութեան մէջ, որը մարդուն տալիս է համենմատարար քիչ, թեթև աշխատանքի փոխարէն՝ ամենաշատ նիւթական վարձարութիւնն։ Նոյնակէս և մարդկանցից՝ միայն նրանք արժանանում են հասարակութեան ընդհանուր յարգանքին, ընդհանուր համակութեանը, որոնք ամենաքիչ աշխատանքով, ամենաշատ փող կարողանում են վաստակել։ Այս դէպքում՝ ինչպէս աշխատանքի ներքին բովանդակութիւնը, նոյնպէս և աշխատաւորի բարոյական արժանաւորութիւնները աչքի առաջ չեն առնիւմ։ (Հազուագիւտ բացառութիւններով) Թէ ընտանիքի և թէ հասարակութեան մէջ, բոլոր խնդիրներում՝ ամենամեծ յարգանքը, ամենամեծ պատիւը ստանում է նա, ով որ ամենաշատ կապիտալի տէր է, — հասկանալով իրեւ կապիտալ և այն միջոցները, սրոնցով մեծ յաջողութեամբ կարելի է փող դատել։ Փողի, կամ հարստութեան քանակութիւնը մի ընդհանուր չափ է, որով չափում է մարդոց տալու յարգը, պատիւը, դիրքը՝ հասարակութեան

մէջ, Այսպէս էլ որոշվում է մարդոց փոխադարձ յարգի ու պատուի խնդիրը։ Որքան որ աստիճաններ կան հասարակական կեանքում՝ հարստութեան, դիրքի տեսակէտից՝ նոյնքան աստիճանների էլ բաժանվում է մարդոց ստանալու յարգն ու պատիւը։ Խոկ, իրեւ ընդհանուր օրէնք, ամեն տեղ ընդունուած է, որ քիչ հարստութեան, ուրեմն և քիչ յարգի ու պատուի տէր մարդը՝ միշտ պիտի խոնարհու աւելի շատ հարստութեան, բարձր դիրքի, բարձր պատուի տէր մարդու առաջ։ Դուք կարող էք թէ խեկորի, թէ զիստութիւնով, և թէ բարոյականութիւնով շատ բարձր լինել ձեզ զրջապատող մարդկանցից, բայց եթէ ձեր այդ հոգեկան ընդունակութիւնները նվաճական մեծ շահ չեն բերում ձեզ, եթէ դուք այդ ստացած շահի, կամ կապիտալի չնորհիւ, բարձր դիրք չեք վայելում հասարակութեան մէջ, — դուք անշուշտ պարտաւոր էք (հասարակութեան տեսակէտից) խոնարհուել, գրուի իշացնել, ստորանալ իրեւ մարդ՝ այն անձնաւորութեանց առաջ, որոնք հարստութիւնով և դիրքով ձեզանից բարձր են, չնայելով որ հոգեկան ոյժերի կորմից՝ անհամեմատ ստոր են ձեզանից։ Ամենօրեայ, սովորական մի բան է տեսնել թէ ինչպէս աղնիւ, խելացի, ինտելիգենտ երիտասարդը ստիպուած է ամենաչնչին ուռիւկով զանազան ստորացուցիչ պաշտօններ վարել՝ մեծ հարստութեան, մեծ դիրքի ու պատուի տէր մարդոց մօտ։ Դուք ձեր ներքին, հոգեկան աշխարհում կարողէք շատ բարձր մորելով, իդէալներով սնուելու ձեր զարգացած, լուսաւոր մատրը թափանցում է թէ արտաքին բնութեան երևոյթների և թէ մարդոց հասարակական կեանքի ամենապարին խնդիրների մէջ, ձեր դիրքութիւնը, ձեր խելքը, ձեր ընդարձակ զարգացումը բաց են առնում ձեր առաջ կեանքի բոլոր գաղտնիքները . . . Սակայն այդ բոլոր հոգեկան հարստութիւններով ու գանձերով հանդերձ, երբ դուրս էք գալիս փողոց՝ դուք

ստիպուած էք,—հասարակաց կեանքի սովորութիւնը պահանջում է ձեզանից՝—զուխ վեր բերել, ողջունել, ստորանալ, այն մարդոց առաջ, որնց համար ամեննին գոյութիւն էլ չունին ձեր հոգեկան հասարաւթիւնները, որոնց մտաւոր և բարոյական աշխարհը մի կատարեալ անապատ է ներկայացնում՝ գաղափարների, ձգումների կողմից, բայց որոնք, միւնպէն ժամանակ՝ „արդիւնաւոր պաշտօնի“ տէր են, մեծ ու ոճիկ են ստանում, բարձր, պատուաւոր դիրք են վայելում հասարակութեան մէջ։ Այս, դուք ստիպուած էք խոնարհուել, զուխ տալ այդ պատուաւոր քաղաքացիներին“, որովհետեւ նրանց ամենքը պատվում, յարդում, ընդունում են, որովհետեւ ամեն տեղ նրանց խօսքը—խօսք է, ասածը—ասած է։ Իսկ դուք, ձեր բոլոր գաղափարներով, իդէալներով հանդերձ՝ մնում էք հասարակութեան կողմից աննկատելի, ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում ձեզ վրայ, ոչ ոք չի էլ ցանկանում մօտենալ, խօսել ձեզ հետ, եթէ չունէք հարստութիւն, չունէք բարձր պաշտօն, չունէք նշանաւոր դիրք հասարակութեան մէջ։ Այս է մեր կեանքի ողին, մեր կեանքի բարոյականութիւնը։ Եւ այդ առաջացել է փողի, հարստութեան, կապիտալի անբարոյականացնող ազգեցութիւնից։ Այդ այն մարդկան են, որոնց համար թանգ է իրանց սեփական

VII

Ի հարկէ լինում են հասարակութեան մէջ մարդիկ, առանձին բացառութիւններ, որոնք ամեն կերպ աշխատում են չենթարկուել բուրժուազական կեանքի օրէնքներին, որոնք գիտեն յարգել թէ իրանց և թէ ուրիշների մարդկային արժանաւորութիւնները, բոլորավան աղաստ, անկախ հարստութեան, պաշտօնի, դիրքի նշանակութիւնից։ Այդ այն մարդկան են, որոնց համար թանգ է իրանց սեփական

մարդկային արժանաւորութիւնը, իրանց ներքին, հոգեկան աշխարհի ամբողջութիւնը, Այդ մարդիկ երբէք չեն համաձայնիլ կատարել մի գործ, որ հակառակ է իրանց բնաւորութեանը, երբէք չեն զիջանիլ կապիտալի ստրկացնող, փչացնող պահանջների առաջ։ Նրանց բոլոր կատարած գործերը համապատասխանում են իրանց հոգեկան պահանջներին, իրանց գաղափարների, ձգումների, համոզմունքների թելարգութեանը։ Բացի դրանից, որ այդ մարդիկ աշխատում են իրանց սեփական մարդկային անկախութիւնը պաշտպանել, իրանց սեփական ընդունակութիւններին, ձիբերին ընթացք տալ՝ աղաստ զարգանալու—այլ և իրանց բոլոր ոյժերով մաքառում են կեանքի այն պայմանների դէմ, որոնք ստորացնում, այլանդակում են մարդու անհատական—հոգեկան ամբողջութիւնը, որոնք խոնարհեցնում են մարդուն՝ փողի, կապիտալի առաջ, ստիպում են նրան մոռանալ իր մարդկային նշանակութիւնը, իր մարդկային պատիւը, Կարճ խօսքով՝ նրանք պաշտպանում են մարդկային անհատականութեան խնդիրը։ Պաշտպանելով անհատի անկախութեան, աղաստ զարգանալու իրաւունքները այդ մարդիկ յանդգնում են կրիւ յայտնել ամբողջ բուրժուազական կեանքի դէմ և յանդգնուս են իրանց դէմ գրգռել ամբողջ ժամանակակից ՝ Դրամատէր՝ հասարակութիւնը։ Այս մի այնպիսի յանդգնութիւն է, որ պահանջում է մարդուց մեծ հոգեկան ոյժ, կորովի անվեհերութիւն։ Այդպիսի քայլ անելու համար, մարդ ինքը ամենից առաջ պիտի լինի սարսափելի անհատական ոյժի տէր մարդ, —նա պիտի կարողութիւն ունենայ քաջութեանը տանելու ամեն տեսակ գրկանք, նեղութիւն, հալածանք, նա պիտի անդողյալ մնայ իր նպատակների, իր համոզունքների մէջ՝ կեանքի ամենադադարն և անտանելի հանդամանքներում։ Անհատական ոյժը, աղաստութեան, ինքնուրոյնութեան, անկախութեան ոգին՝ պիտի կաղմէ

այդպիսի մարդու բնաւորութեան հիմունքը, նրա „ես“^ը ՚ հարկէ այստեսակ զարգացած, կազմակերպուած անհատը, իր անհատական անընկճելի կամքով, իր խփառ համսգունքներով, իր անպարտելի, ազատ ոգով՝ շատ անսովոր մի երևոյթ է բուրժուազական հասարակութեան մէջ։ Բուրժուազական կեանքը չէ սիրում զարգացած անհատականութեան մէջ մարդոց։ մարդու անկախութեան, ինքնուրոյնութեան, պատուածանաշութեան ոգին, մարդու վսեմ հոգեկան ձգումները, մտաւոր թուիչը, բարոյական նուրբ սիրանշումնքները—այս ամենը ենթարկվում են հալածանքի, ոտնակոխ են լինում մեր այժմեան հասարակութեան մէջ։ Եւ այդպիսի հոգեկան պահանջների տէր մարդը, մեր ժամանակից հասարակութեան կարծիքով համարտ է, ևսական է, ինքնահաւան է, յիմար է և այն։ Հասարակութիւնը դատապարում է նրան՝ որ չի ուզում հաշոտել կեանքի հետ, չի ուզում ապրել ընդունուած, սովորական կարգերով, դատապարում է նրան հասարակութիւնը, որ նա իրան բարձր է համարում լրջապատող մարդկանցից, որ նա զգում և հասկանում է իր հոգեկան բարձրութիւնը, իր բարոյական առաւելութիւնը։ Ահա, զարգացած անհատի այդ գիտակցութիւնը, այդ ինքնահանաշութիւնը՝ միանդամայն անտանելի է հասարակութեան համար, և հասարակութիւնը երբէք չի կարողանում հասկանալ, ըմբռնել նրան, երբէք չի կարողանում ներել նրան այդ . . .

Այժմ դառնանք պ. Շիրվանդակէն։ Ես ասեցի, որ Դիմաքսեանի բնաւորութեան մէջ կայ մի արմատական առկութիւն, որ կազմում է նրանում ամեն բանի հիմքը—այդ նրա ինքնակիրութիւնն է, նրա „ես“ն է, որին պ. Շիրվանդակէն անուանում է օձ։ Շնորհիւ այն հանգամանքի, որ հեղինակը աղաւաղել, ծաղրական է դարձել իր հերոսի տիալը՝ շատ դժուար է աչքի ընկնում այդ տի-

պի հարազատ, իսկական արժանաւորութիւնը։ Դիմաքսեանի բնաւորութեան մէջ՝ սպիտակն ու սև այնպէս խառնաշմտի, անբնական կերպով միացած, խճճուած են իրար հետ, որ անուշադիր ընթերցողը կարող է գլուխը կորցնել այդ “բարելոնեան խառնակութեան” մէջ, և շատ անդամ՝ դրական արժանաւորութիւնները շփոթել բացասական թերութիւնների, այլանդակութեանց հետ։ Սակայն, չնայելով այդ խառնակութեանը, դարձեալ կարելի է մասնացոյց անել այնպիսի բնորոշ գծեր, որոնք աներկրայելի սեփականութիւնն են կազմում Դիմաքսեանի նման մարդոց բնաւորութեան։ Հէնց պատանեական հասակից Դիմաքսեանը առիթ է ունենում արտայայտել իր բնաւորութեան անկախութիւնը, ինքնուրոյնութիւնը։ Դիմաքսեանը ական գասընթացը վերջացնելուց յետոյ՝ պատանի Սրտէնը ստանում է հօրից մի նամակ, որի մէջ նրա հարուստ կալվածատէր հայրը պահանջում է որդուց վերադառնալ հայրենից և օգնել իր հօրը՝ բազմաթիւ գործերի, զրադ մունքների մէջ։ Որդին հէնց առաջին անգամից կտրական պատասխան է գրում հօրը, “թէ ինքը պէտք է լինի այն, ինչ որ կամենում է,” և նամակը վերջացնում է հետևեալ խօսքերով։ “Գարով ձեր օգնութեանը, որից ինձ չէք ուզում առ այժմ զրկել, ես կընդունեմ նրան մինչև սւսմանն վերջը, ինչպէս պարտք։ Դուք կարող եք զրկել ինձ օժանդակութիւնից, իսկ աղասի կամքից—երբէք։” Այս առաջ բերած նամակի մէջ կայ և մի դարձուածք, որ հեղինակը դիտմամբ է մոցըել, իսկ ես դիտմամբ առաջ չը բերեցի վերառում, ահա այդ, “ընաւ մատադիր չէ (Սրտէնը) հնացած սերնդի կամքին առըկանալ,” Այս խօսքերը, ես ասեցի, դիտմամբ մոցըել է հեղինակը Դիմաքսեանի։ Իր հօրը գրած նամակի մէջ, որպէս զի ընթերցողի աքրում աւելի խիստ երևաց՝ երխուասարդի անհնաղանդ որդի լինելը, եւ հեղինակը, ի հարկէ, հասել է իր նպատակին,

Սակայն իզուր նեղութիւն է քաշել հեղինակը այդախի անվայել յանդասութիւն, նոյնիսկ յիմարութիւն վերապել իր վէտի հերոսին, առանց դրան էլ, առանց այդ հնացած սերնդի” և այն գարձուածքի էլ հնացած սերունդը կը դատապարտէր պատանի Արսէնին՝ հօր կամքին չը հնազանդելու համար։ Հեղինակը ի զուր է աշխատել սաստկացնել նրա մեղքը, նրա գլխաւոր մեղքը այն է, որ դւրում է՝ հէնց պատանեական հասակից՝ ինքնուրոյն լինել, անկախ և ազատ լինել ամեն տեսակ հոգացողութիւնից, — նոյն իսկ հարազատ ծնողին նրա մեղքը այն է, որ նա զգում է իր մարդկային, անհատական իրաւունքները, գիտէ, որ ինքը, իբրև մարդ, ունի մարդկային այնպիսի պահանջներ, որոնց մասին ինքը և միայն ինքը կարող է հոգալ։ Մարդու անհատական կեանքի իրնորիների մէջ, ուրիշ մասնակցութիւնը՝ հակառակ նրա կամքին-լինի այդ ուրիշը թէկուզ ամենամօտ մի մարդ, — անտեղի է, անփրաւացի է, բունութիւն է։ Դիմաքսեանի մեղքը այն է, որ շատ կանուխ, պատանեական հասակից՝ նա ունեցել է այս տեսակ յանդուգն, արմատական մոքեր, գաղափարներ . . .

Եւրոպական ուսումը և կրթութիւնը, եւրոպական կեանքի, քաղաքակրթութեան, կուլտուրայի ազգեցութիւնը աւելի ևս կը զարգացնէին ուսանող։ Դիմաքսեանի մէջ նրա բնածին այդ յատկութիւնները. — նրա ինքնուրոյն անկախութեան ողին, նրա անհատականութիւնը և նենելով հասարակական գիտութիւնների մասնագէտ՝ նա շատ լաւ կարող էր հասկանալ թէ՝ ինչպէս է առաջ եկել մեր այժման հասարակութիւնը, ինչ օրէնքներով է նա կառավարվում և ինչնումն է կայանում մեր կեանքի դմասաւոր չարիքը, նա շատ լաւ գիտէր, որ մեզանում անհատը կորցրել է իր բուն մարդկային արժանաւորութիւնները, սարկացել, գերի է դառել հարատութեան, կապիտախ աւ-

ռաջ։ Դիտէր, որ տգիտութիւնը, ամիական մորոց գաղափարները, նախապաշարմունքները խանգարում են անհատին հասկանալ իր բարոյապէս ճնշուած, ստորացած դրութիւնը։ Այս ամեննը ոչ միայն դիտէր նա, որպէս կողմընակի անձնաւորութիւն, այլ և ինքը, իր սեփական կաշու վրայ զգացել էր և ամենայն օր զգում էր թէ՝ ինչպէս բուրժուազական հասարակութիւնը յաւակնութիւններ է ունենում ճնշել, ստորացնել բարոյապէս նաև իրա, Դիմաքսեանի արձնաւորութիւնը. Որտեղ կայ մարդոց մէջ փողային, դրամական յարաբերութիւն, այնտեղ կայ և բարոյական ճնշում, մարդկային անձնաւորութեան սպորացում. Եւ Դիմաքսեանը, որպէս զարգացած անհատականութեան տէր մարդ, — որպէս մի մարդ, որի մէջ բարոյական անկախութեան, ազատութեան, ինքնուրոյնութեան պահանջը վերին աստիճանի նրբութեան է հասած, — նա իր կեանքում ամեն կերպ աշխատում է անկախ լինել մարդու կանցից, աշխատում է մազի չափ անգամ պարտաւոր չը մնալ ոչ ոքի. Եւ միայն սրանով է բացատրվում այն, որ նա մտածում է վերադարձնել հօրից ստացած նպաստը սրանով է բացատրվում, որ նա աւելի չուտով կը համաձայնի քաղացած մնալ, քան թէ մէկից պարտք վերցնել, թէկուզ այդ մէկը լինի նրա մտերիմ ընկերը. . .

Ներսիսեան դպրոցի սևուցչական ժողովում, ընդհանուր վիճաբանութեան մէջ, Դիմաքսեանը այսպիսի մտքեր է յայտնում՝ աշակերտների դաստիարակութեան վերաբերմամբ. „Ուսուցիչը, կամ վերակացուն չը պիտի լինի աշակերտի կամքի լիազօր տէրը, այլ նրա առաջնորդը և խորհրդատուն. Ոչ ոք իրաւունք չունէ կաշկանդել անհատի միաքը, բունի ոյժով հանել նրա գլխից մէկը — դնել միւսը, որքան ևս փոքր լինի անհատը. Պէտք է ազատութիւն տալ աշակերտի մտաւոր և բարոյական յատկանիների զարգացմանը.” Այս մաքերին հակառակում է գերմանական մանկա-

վարժ. Ինիաթեանը և մեղադրում է Դիմաքսեանին թէ՝ նա անիշխանութիւն է քարոզում... Եւ հարկէ, եթէ ոգերմանական մանկավարժը՝ այդպէս է հասկանում նրա մտքերը, ել հասարակ մահկանացուներից ինչ կարելի է սպասել. Հասարակութեան ամբողջ կազմութիւնը իր տրադիցիայով հակառակ էր նրա մտքերին, նրա ուղղութեանը, նրա ողուն. Եւ նա սահպուած էր մրցել ամբողջ հասարակութեան հետ. Այդ մրցումը ոչ միայն սառը գաղափարի մրցում էր, այլ և դգացմունքի, այլ և սրտի. Որովհետեւ Դիմաքսեանի նման մարդիկ, իրանց մտքերը, իրանց գաղափարները միայն իրանց գլխի մէջ չեն պահում, որպէս մի առանձին գարդարանք, չքեզութիւն՝ տեղն ընկած ժամանակ ցոյց տալու, փայլելու համար—ոչ, նրանց մտքերը, նրանց համոզմունքները տարածվում են նրանց ամբողջ հոգու վրայ, և դառնում են սրտի, դգացմունքի, ինքնասիրութեան առարկայ. Այդ պատճառով էլ նրանք այնքան նախանձախնդիր են իրանց գաղափարների, այդ պատճառով էլ Դիմաքսեանը այնքան կատաղած պաշտպանում է ամեն. տեղ իր համոզմունքները. Այն, կասաղած. — Նա ուրախանում, ցնծում, ողերդիւմ է, երբ տեսնում է թէ՝ մարդիկ հասկանում են իրան, համաձայնում են իր կարծիքների հետ,—և, ընդհակառակ՝ դայրանում, կատաղում է, երբ մարդիկ չեն հասկանում, չեն ընդունում նրա քարոզած ճշմարտութիւնները. Դէպի իր գաղափարները, իր համոզմունքները այդպիսի մոլեսանդ վերաբերութիւն՝ յատուկ է միայն Դիմաքսեանի նման մարդոց, և կազմում է նրանց խսկական փառքը. Սակայն այդ փառքը շատ ծանր գնով է առնալու նրանց համար, և խորը հոգեկան տանձանքներ է պատճառում իր վայելողներին. . . Հաստու բարակ մէկ զին, եւ—մայ բարակ մանողին, — ասում է խոր իմաստ ժղովրդական առածը. Եւ Դիմաքսեանը ճիշտ “բարակ է մանում.” Մինչդեռ ուրիշները, ընկած

կեանքի յաջողութեան յետելով կեանքի առօրեայ, գործնական պահանջները՝ փայլում են բուրժուազական հասարակութեան մէջ, ցոյց տալով իրանց՝ և աղատամուտ, և առաջադիմական, և ազգասէր, և հասարակական գործիչ—առանց մազի չափ անզամ կազուած լինելու հասարակութեան բուն շահերի հետ, առանց որ և է ներքին, հոգեկան խոր զգացմունք տածելու դէպի իրանց յայտնած և բարձրածայն պաշտպանած մտքերը, — այն ինչ Դիմաքսեանը, չնորհիւ իր անկեղծութեան, չնորհիւ իր մոլեսանդութեան, ամբողջ հոգով եռում, բարբորփում է անդադար, ամբողջ իր էութիւնով մարմնացնում է իր մէջ հասարակական ցաւերի, հասարակական պիտոյքների կենդանի բողոքը. Եւ նա զգում է իր մէջ խորը, հոգեկան յուրմունքներ . . . „ինչո՞ւ այսքան զգայուն եմ, ինչո՞ւ սիրու լիքն է անզուսպ կրեերով, ոչ-խօլական կրեերով, այլ սիրելու և ատելու բուն աւինով“: (եր. 95) Ահա, այսպէս է մտածում նա իր մասին, կեանքի դառն բոպէներում:

VII

Ով որ ուզում է կեանքի մէջ աջողութիւն, բաղդառութիւն ունենալ, նա չը պէտք է լուրջ վերաբերուի դէպի կեանքը, չըպէտք է մեծ պահանջներ անէ կեանքից. Դյորակամ ազետե, — ասում են մարդիկ սովորական խօսակցութեան մէջ, և գուցէ շատերը չեն կարծում թէ՝ որպիսի դառն ը ճշմարտութիւն են պարունակում այդ խօսքերը, — շառը ճշմարտութիւն: Քանի մարդ հարուստ լինի հոգեկէս, քանի նա բազմակողմանի լինի իր կենսական հասկացողութեանց, իր ցանկութիւնների, ձգտումների մէջ՝ այնքան էլ քիչ շանս կունենայ բաւականութիւն տալ իր հոգեկան պահանջներին, այնքան էլ դժուար կը լինի նրա

համար կեանքը,—և ընդհակառակ։ Մեր ժամանակակից
հոգեքանական շկօմայի պատկանող վիպասանները՝
գլխաւորապէս այդ են վերցնում իրանց վէպերի նիւթը, —
ցոյց տալ թէ ինչպէս տանջվում, չարչարփում է հոգեպէս
մի անհատ, որ չնորհիւ իր անհատական բազմակողմանի
զարգացման, բաւականութիւն չի գտնում կեանքի մէջ. . .
Եւ քանի այդ անհատը խիստ պահանջներ անէ կեանքից,
քանի բարձր լինին նրա ձգտումները, քանի նուրբ լինին
նրա բարոյական զգացմունքները, այնքան էլ խիստ, ճա-
տապիրական կը լինի նրա ընդհարումը կեանքի հետ,
այնքան էլ սրտաշրժ կը լինի այդ ընդհարումից առա-
ջացած դրաման։ Դիմաքսեանը ձեզ օրինակ։ (Ընթեր-
ցող, չը մոռանաք, որ ես խօսում եմ խակական Դի-
մաքսեանի մասին, և ոչ պ. Շիրվանզադէի վէպում դուրս
բերած) Եթէ նրա սիրու լիքն է սիրելու և ատելու բուռն
աւելուվ, —նա, հշմարիս—որ գիտէ բուռն կերպով սիրել
և ատել, Եւ նրա բոլոր ցանկութիւնները, բոլոր զգաց-
մունքները բուռն են, հրարուխային են։ Այդ է պատճառը
նրա թշուառութեան, Օրիորդ Գայիանէ Բախտամեանը
չէր կարող սիրել Դիմաքսեանին ոչ թէ այն պատճառով,
որ այդ երիտասարդը տգեղ էր, նրա մարմինը փոքր էր,
տձեւ էր և այլն, ինչպէս հաւատացնում է մեզ պ. Ծիր-
վանդադէն, —ոչ. այդ բոլորը պատճական, հնարովի
պատճառներ են։ Եթէ Դիմաքսեանը չունենար էլ այդ
Փիզիքական այլանդակութիւնները (որ շատ բնական էլ
կը լինէր) —դարձեալ Գայիանէն չէր կարող սիրել նրան։
Չէր կարող, որովհետեւ ինքը Դիմաքսեանը նրան սաստիկ էր
սիրում, որովհետեւ այդ սէրը շատ բուռն էր երիտասարդի
մէջ, որովհետեւ ինքը, երիտասարդը չափից դուրս մեծ-
նշանակութիւն էր տալիս այդ սիրուն։ Բարաթեանի նման
կոկիկ, լսուած երիտասարդը, որի համար ոչինչ սրբու-
թիւն չկայ կեանքի մէջ, որը, ինչպէս մեր ժողովուրդն ա-

սում է՝—մտնել լողալն էլ դիտե, ելնել դողալն էլ—նա
անջուշտ, կարող էր աւելի հետաքրքրել մի օրիորդի, քան
թէ Դիմաքսեանի նման լուրջ, զգայուն, ազնիւ, վեհանձն
և իիստ հասկացողութիւնների, խիստ պահանջմունքների
տէր մի երիտասարդ։ Եւ այն էլ իդէալիստ Իդէալիստ
մարդկանցից փախչում են, առհասարակի, օրիորդները՝
մանաւանդ հայ օրիորդները։ Աերջը այն եղաւ, որ Դի-
մաքսեանը, իր իդէալներով, իր բարձր զաղափարներով,
իր բուռն կրքերով՝ մնաց դուրս քամու և անձրեւի տակ,
իսկ Բարաթեանը եղաւ Գայիանէի օրինաւոր ամուսինը և
տիկին Բախտամեանի ազօրինի միլովոց։ —Այս շատ սովո-
րական մի քանի բուրժուազական հասարակութեան մէջ,
և փայել է ամեն մի „Զէնուլմէն“ տղամարդու։ Միայն ի
զուր պ. Շիրվանզադէն էլի շարունակում է Բարաթեանի
և Գայիանէի անհետաքրքիր, ձանձրալի պատճութիւնը՝
նրանց ամուսնութիւնից յետոյ։ Ամենենին հասկանալի չէ
թէ ինչու Գայիանէն սկսում է ատել իր մարդուն, քանի
որ ամուսնութիւնից առաջ էլ Բարաթեանը նոյնչափ
յայտնի էր . . . օրիորդին, որչափ և ամուսնութիւնից
յետոյ։ Եթէ Գայիանէի այդ „ամուսնական խնդիրը“ լիլ-
նէր, „Արաէն Դիմաքսեան“ վէպն էլ այդքան ստուար չէր
դուրս գայ և այնքան ի զուր ժամանակ չէր լիլ ընթեր-
ցողից։ —Ինչ և իցէ։ Դիմաքսեանի դէպի Գայիանէն ունե-
ցած սիրոյ պատճութեան մէջ մի կէտ կայ շատ հետա-
քրքիր։ Այսպէս թէ այնպէս՝ երիտասարդը սիրահարուել
է օրիորդի վրայ։ Պատճառաբանութիւնը աւելորդ է, ո-
րովհետեւ սէրը, անհաջիւ զգացմունք է։ Բայց տեսէք թէ
ինչպէս է արտայացուում երիտասարդի անհատականութիւնը
նոյն իսկ այդ սիրոյ մէջ։ Ինչպէս որ նա մեծ պահանջներ
է անում առհասարակ կեանքից, նոյնպէս էլ վերաբերքում
է դէպի իր սիրոյ առարկան։ Նա պահանջում է օր. Գա-
յիանէից, նոյնպիսի բուռն, նոյնպիսի անձնուէր զգաց-

մունք, ինչպէս որ ինքն է սիրում և, տեսնելով, որ օրի-
որդը, թեթևամտաբար՝ չի կարողանում գնահատել իրան,
Դիմաքսեանին, չի կարողանում հասկանալ նրա հոգու մէջ
կատարուածը, և առաւելութիւն է տալիս գեղեցկադէմ
ճարպիկ Բարաթեանին, երիտասարդը՝ չը նայելով իր
սաստիկ զգացմունքին, կարողանում է պահել իրան, և ոչ
մի անգորդ խօսքով չի բաց անում Գայիսանէի առաջ իր
գաղտնիքը . . . Ի հարկէ, —և այդ շատ բնական է, Քա-
նի խոր լինի մարդու մէջ մի զգացմունք, քանի շատ եր-
ջանկութիւն, կամ տանջանք պատճառ է նրա հոգուն այդ
զգացմունքը, այնքան էլ ծանր կը լինի խօսել այդ մասին,
այնքան էլ դժուար կը լինի բացատրուել: Մթէ այս չի
հասկանում պ. Եիրվանզադէն: Եթէ Դիմաքսեանը չը յայտ-
նեց իր սէրը օր. Գայիսանէն, դրա պատճառը այն էր, որ
նա իրաւացի կերպով կասկածում էր օրիորդի անկեղծու-
թեան մասին, —նա տեսնում էր, որ օրիորդը աւելի հա-
կուած է դէպի Բարաթեանը, ապա ուրեմն կարող է մեր-
ժել Դիմաքսեանին և դառնալ Բարաթեանի կինը՝ ինչպէս
և եղաւ: Պ. Եիրվանզադէն, ինչպէս ամեն դէպքից, նոյն-
պէս և այս դէպքից աշխատում է օգուտ քաղել՝ Դիմաք-
սեանի վարմունքը դէպի վատը բացատրելու, —նա ասում
է. „Եթէ Գայիսանէն նրան մերժէր և յետոյ դառնար Բա-
րաթեանի կինը, նա կը խելագարուէր: Խնդնափրութիւնը
նրան (Դիմաքսեանին) կը սպանէր: Այն, նա շատ ինքնա-
սէր էր, չափազանց, այդ ինքն էլ զիտէ: Բայց միթէ չէ
հասկանում, թէ դա բարյալիան հիւանդութիւն (?) է, մի-
թէ խելը չէ բողոքում դրա դէմ: Քանի քանի անդամ նա
ինքն իրան դաստապարտել է, նախատել, յանդիմանել է
այդ մասին, բայց ի զուր: Նրա եսը նրա մէջ (լսեցէք ըն-
թերցող) մի չար օձէ: Դիշեր ցերեկ այդ օձը արթուն
օղակում է ներսումը: Բաւական է մի թոյլ շուրէ, մի
նուրբ չօչափում է ներսումը: Այս ամսականը կամ

լարուել, բանալ բերանը, ցցել առւր ատամնեըը (այ, այ,
այ . . .): Նրա պրտի մէջ և թափեր այնտեղ իւր սոսկալի
թոյնը, Ահա հէնց այդ օձնէ նորան ստիպում լինել միշտ
դիւրագրգիս, միշտ բարկացոտ, միշտ պատրաստ չար
վհուկի պէս (այ, այ, այ) ճիրանները խրել առաջին պա-
տահած հակառակորդի կուկորդը:“

Տեսանք, ընթերցող, ինչ բաներ գիտէ պ. Եիրվանզա-
դէն: Նրա այդ խօսքերը ոչինչով պակաս չեն իր նկարա-
գրած օձի սոսկալի թոյնից: և նա թափում է իր այդ
թոյնը Դիմաքսեանի վրայ, թափում է իր ամբողջ պատ-
մութեան ընթացքում . . . և չի կշտանում, և չի հան-
գստանում Խոկ մեր աչքում ծիծաղելի է միանգամայն պ. Եիրվանզադէի զարյոթը, ծիծաղելի է նրա այդ սաստիկ
ձգտումը, —ինչ էլ որ լինի՝ արատաւորել մի մեծ մարդու
անարատ և սուրբ անունը. պ. Եիրվանզադէի զրած հա-
գին վէպը այդ ոգով է չնչում, այդ նպատակին է ծա-
ռայում:

Դիմաքսեանը մեծ է թէ սիրելու և թէ ատելու մէջ:
Մեծ են նրա մաքերը, ձգտումները, մեծ է նրա ամբողջ
հոգեկան աշխարհը: Ունենալով իր մէջ հոգեկան բազմա-
կողմանի զարգացած ոյժեր՝ նա ազատ կերպով ծառայե-
ցնում է իր այդ ոյժերը ազգի, հասարակութեան օգտին
և այդ գործում այնքան ուժեղ, այնքան ինքնուրյուն է
զգում իրան, որ համարձակում է իր կամքը դնել հասա-
րակութեան կամքի դէմ, համարձակում է բացարձակ
հակառակուել հասարակութեան մէջ ընդունուած տրադի-
ցիային: Մինչդեռ հասարակական տրադիցիան սահմանել
է կեանքի բոլոր ասպարէզներում: ստիպում անել մարդ-
կային անհատական արժանաւորութիւնները, ստորացնել:
Ճնշել բարյապէս մարդու անձնաւորութիւնը՝ հաւասարա-
ցներով նրան անխօս կենդանիի, կամ անշունչ մերենայի
հետ, —Դիմաքսեանը բաւական չէ, որ այնքան հպարտու-

թեամբ պաշտպանում է իր սեփական անձի և պատուի ապահովութիւնը, անկախութիւնը, նա կատաղի կոիւ է սկսում հասարակութեան մէջ ընդունուած սոսկալի անհաւասարութեան դէմ, բարձրաճայն պաշտպանելով անհատի ազատութիւնը, նրա մարդկային, բարոյական իրաւունքները: Հասարակութիւնը սարսափելի հալածանք է սկսում նրա դէմ, — նրան հայրում է — „անլուօն,“ „խելագար“ և այլ խօսքերով, խակ Դիմաքսեանը դարձեալ մնում է անշարժ իր բարոյական համոզմունքների մէջ, դարձեալ նրա մէջ չի պակասում կուռելու, ընդդիմանալու ոյժը, կորով:

Անանքի ամենանեղ հանգամանքներում, ընդհանուր դայրոյթի, ատելութեան ժամանակ՝ նա լոկ ինքն իր օդնութեանն է դիմում, ինքն իր ոյժերին է ապաւինում. Եւ այսպէս է զարգացել նրա մէջ ինքնասիրութեան, ինքնապաշտպանութեան զգացմունքը, այսպէս է կազմակերպուել նրա եսը: Նրա եսը, — նրա բարոյական անարատութիւնն է, նրա ամբողջութիւնն է. կեանքի մէջ ինքնիրան ըստ կորցնելու, իր ճանապարհի, իր ընտրած գործունէութեան ասպարէզի վրայ անփոփոխ, կայուն մնալու ընդունակութիւնն է: Նրա եսը — նրա աղանապան հրեշտակն է, որ միշտ հովանաւորում է նրան բոլոր գործերի մէջ, որ նեռու է պահում նրան կեանքի հրապոյըներից, որ ազատում է նրան բարոյական անկումից, նսկ պկ. Շիրվանզադէն, իր վէպի միջոցով՝ ուզում է հաւատացնել թէ՝ Դիմաքսեանի նսան մարդոց եսը մի չար օձ է նրանց մէջ, որ միշտ թունաւորում է նրանց սիրտը: Ռայց ովկ գիտէ, դուցէ նա այդ բանը համոզմունքով է առում, — գուցէ նա, բացի նեղ, ստոր, վաճառականական զզուելի եսից՝ ուրիշ տեսակ եսի մասին գաղափար չունի, — շատ կարելի է . . .

Ես վերջացրի իմ ասելիքը: Ընթերցողը այս բոլորը կարդալուց յետոյ՝ էլ տեղիք չունի վերջնական եղբակացութեան սպասելու „Արսէն Դիմաքսեան“ վէպի մասին: Եղբակացութիւններ շատ կարելի է անել, բայց գիտաւոր բանը ճշմարտութիւնն է, որին հաւատարիմ պէտք է մնալ ամեն տեղ: Ճշմարտասիրութեան զգացմունքը ինձ դրդեց այսքան խօսել մի վէպի մասին, — ճշմարտասիրութեան զգացմունքով առաջնորդուած՝ թող ընթերցողն էլ անէ իր եղբակացութիւնը:

Առաջ սրբ պրովենտի ուղարկած նոյն մոցակդիք սՅ
առցուցը մաքամեդի վեհա գլուխ է կամ շարաբար
միան միւնի "մաքամեդի մշոյն" արծուրա մատիւաց
դուռամիր ըստ յան չընու չ վիճակ ուս զննոյթացայսոյքի
յան չ գույն ներառաւու միւր չ մետիթառարան չ վեհ
սմբոր և նոյն պահանջար մասն ուղիւառայնունց ուժու մասն
մատիւացայսունց—միան դրսի մի յասու մացաւ
ոյ նմա թ մարդուն բոն "նաւորոյնիւսու խօթենեցար
ողմայթացայսու



ԳԻՒՆ Է 20 ԿՈՊ.



